№ 7 (138)   XIII ՏԱՐԻ   ՕԳՈՍՏՈՍ 1903

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՕՐԳԱՆ

ԿՈՎԿԱՍԱՀԱՅԻ ՏԱԳՆԱՊԸ

„Այս է իմաստութեան վերջին խօսքը— նա է միայն արժանի ազատութեան եւ կեանքի, ով որ ամէն օր կռւով նւաճում է նրանց":

ԳՅՕԹԷ („Ֆաուստ")

1825 թւին „Խելքից պատուհաս"-ի հռչակաւոր հեղինակ և Արեւելքին քաջ ծանօթ Գրիբօեդով իր բարեկամ Բէգիչեվին Թէոդոսիայից ուղղած մի նամակում գրում էր. „Ջենովացիներից և հովիւ-թաթարներից յետոյ Ղրիմ եկանք մենք (ռուսներս)—ընդհանուր ժառանգներս,— իսկ մեզ հետ նաև՝ ա ւ ե ր մ ա ն ո գ ի ն, այդ ս ո վ ո ր ա կ ա ն մեր ո ւ ղ և կ ի ց ը Արեւելքում և Արեւմուտքում":

Եւ առաջ ընթանալով միշտ հաւատարիմ աւերման իր ոգուն՝ Ռուսաստանը, ինչպէս անցեալում, նոյնպէս և այսօր՝ ներկայացնում է ընդհանուր հալածանքի, ընդհանուր աւերածի ու բռնութիւնների մի լայնածաւալ ասպարէզ: Ազգութիւն չմնաց Ռուսաստանում, որ չճնշւէր, ժողովուրդ չմնաց, որ չխեղդւէր, խօսք, կարծիք, իրաւունք, օրէնք չմնաց — նոյնիսկ կայսերական գահերից հռչակւած — որ չտրորւէր: Իշխողների և ստրուկների, գիշատիչների և զոհերի, լրտեսների և լրտեսւողների մի ահաւոր բեմ է դա՝ փոխադարձ ոխի և ատելութեան կրքերով թունաւորւած: Ռուսաստանը մրցում է Տաճկաստանի հետ պետական կեանքի բոլոր ասպարէզներում՝ նոյնչափ յաջող բացասականում, որչափ և դրականում: Եւ վատաբախտ հային վիճակւած է ապրել, օր-արև տեսնելու իրաւունք հայցել այդ երկու մահաբեր բռնակալութիւնների սահմաններում—„սատանայի և խորը ծովի միջև", ինչպէս ասում են անգլիացիք:

Եթէ այս դրութիւնը ընդհանրապէս պարզ չէր մեր նախորդների, մեր պապերի ու հայրերի համար, հապա 80-ական թւականներից սկսած, այստեղ և այնտեղ, մէկը միւսի ետևից տեղացող ծանր հարւածները այլևս կասկած չթողին այդ մասին՝ ժամանակակից սերունդների մէջ:

Եւ հայ դպրոցների փակումից յետոյ, ահա մենք ականատես ենք հ ա յ ե կ ե ղ ե ց ա կ ա ն կ ա լ ւ ա ծ ք ն ե ր ի յ ա փ շ տ ա կ մ ա ն:՝ Այդ կարգի երևոյթները արդէն սովորական ճնշումների արտայայտութիւն չեն, այլ բացայայտ ձեռնոց, որ վայրագօրէն նետում է ռուս աւազակապետութիւնը կովկասահայի ազգային ինքնուրոյնութեանը: Ինչպէս Տաճկաստանում, նոյնպէս և Ռուսաստանում, իզուր անցան ուրեմն „լռութեան", „խոհեմութեան", „բարեմիտ հպատակութեան" և „յարմարւելու" այն բոլոր պատգամները, որ կովկասահայը դաւանում էր ռուս կառավարութեան վերաբերմամբ: Իզուր էինք մենք լսում, ուրեմն, մեր անասնացած բուրժուազիային ու նրա որդեգրած նորագոյն ինտելիգենցիայի ներկայացուցիչներին — այդ դարշելիներին, որոնք ընդունակ են, կառավարութիւնից վարձատրւելու չափ արժանի եռանդով, հայ ժողովրդից պատրաստել խողխողւող ոչխարների կամ այլասերւած անտարբերների մի հօտ միայն: Իզուր էր ուրեմն կովկասահայը հետևում իր կղերին—այդ պատմական անդամալոյծին, որ կախւած ժողովրդի յոգնած, արիւնոտ մարմնից, բազմել էր Էջմիածնում, առաջնորդարաններում, պետական դպրոցներում և այլուր՝ պրօկուրօրների, նահանգապետների, դիրեկտօրների և յետին ոստիկանի հրամանները կատարելու համար: Իզուր էինք, ուրեմն, կեանքի գծւած շահերից մղւած—ինչպէս այդ արել ենք հայերս շատ անգամ— այստեղ ևս խլացնում մեր մէջ բոլոր բարձր պահանջները՝ պատւասիրութեան, համարձակութեան, զոհողութեան, ազնիւ պայքարի մեր ամենալաւ հակումները:

Այո՛, իզո՛ւր, բոլորովին իզուր անցան այդ բոլոր խաբուսիկ ջանքերը, „զգուշութեան" այդ թունաւոր քաղաքականութիւնը, անսիրտ ու սրտկամիտ „խելօքների" այդ վարակիչ, այդ անբարոյականացնող և միմիայն իրենց „խելօքների" համար անձնականապէս շատ ձեռնտու երեմիականները:

Ներկայ համարում տպւած „Կովկասեան խաբրիկները" և մի շարք թղթակցութիւններ արդէն տեղի ունեցած հակակառավարչական ցոյցերի մասին՝ գաղափար են տալիս այն դիմադրական տրամադրութեան մասին, որ արտայայտւում է կովկասահայերի մէջ: Պատկերը լրացնելու համար առաջ ենք բերում այստեղ կրկին մի կտոր մեր ընկերոջ մի նամակից.

„Կալւածների յափշտակման այս տագնապալից խնդրում ամենաուշագրաւ երևոյթն է ժողովրդի ծայրէ ի ծայր ցնցւելն ու շարժւելը: Հայ ժողովուրդը ելէքտրականացել է մի կրակով, մի զգացումով — դիմադրել, կռւել, արիւն թափել. գիւղ, քաղաք, համարեա ամէն դասակարգ, ամէն հասակ այժմ միատեսակ են զգում ու մտածում, միատեսակ պահանջներ արտայայտում,

միատեսակ ծրագիրներ կազմում՝ վրէժխնդրութեան, ինքնապաշտպանութեան եւայլն։ Լեռներում եւ բարձրավանդակներում ժողովուրդը զինւում է։ Մի տեղ ես հանդիպեցի մօտ 200–300 երիտասարդների՝ ձիաւոր, զինավառ, սպասող ազդանշանի, որ դրօշ տան Մայրտաճարի պաշտպանութեան համար։ Ահա ինչու էջմիածինը պաշարուած է զօրքերով։

„Դուք լսել էք երեւի Աշտարակի ցոյցի մասին, բայց չէք լսել, որ երբ Վաղարշապատի գաւառապետը հրամայում է կօզակներին մտրակներով հալածել ժողովրդին դէպի գիւղ, այն ժամանակ Օշականից կօզակների ու գաւառապետի վրայ տեղում են հրացանի գնդակներ բաղերի խորքերից եւ ժայռերի արանքներից, ու գաւառապետը ստիպւում է կօզակներով յետ դառնալ։

„Այժմս անկարելի է զսպել ընդհանուր ցասումը, ինչպէս անկարելի է Մասիսից ներքեւ թափող քարաժայռերը կանգնեցնել։

„Գիւղի գիրք է բռնել հոգեւորականութիւնը (այդ բանին մեծ չափով նպաստել են ժողովուրդը եւ մեր ընկերները)։ Նա մինչեւ վերջին ծայր կը դիմադրէ եւ կամովին ոչինչ չի յանձնիլ կառավարութեան։ Եթէ նրանց մէջ կան թուլամորթներ եւ „խոհեմներ", դրանք էլ որոշ „մշակականների" սիրելիներն են։

„Միակ պախարակելի մօմէնտը, որ թոյլ տուեց հոգեւորականութիւնը—դա մի ռօնի փառք, համարեա ծածուկ օրհնելն էր... Ժողովուրդը—ուր որ եղայ—ցաւ է զգում այս առթիւ եւ սիրտը լցւում է վրէժի թոյնով։ Լինչեան թուրը նրա բռունցքումն է հիմա, եւ մի քանի ժամանակից յետոյ, գուցէ, դուք լսէք սոսկալի վրէժխնդրութեան դէպքերի մասին"...

Ոգեւորիչ տրամադրութի՜ւն, սրտի խորքում անպատուած, վիրաւորուած ժողովրդի զայրո՜յթ. ո՞ւր էիք դուք մինչև այժմ... Եթէ դպրոցների փակման ժամանակ հանդէս գայիք շատ նւազ չափերով անգամ՝ գուցէ խոհերիք Գոլիցիններին, դաժան պլէվէների և անուղեղ Նիկօլաների համար այսօր ճանապարհը դէպի մեր եկեղեցական կալուածքները այնքան բաց չհամարուէր, որչափ այդ երեւաց այժմ։

Բայց անցածը անցել է, և միանգամայն մխիթարական է այն վճռական սթափումը, որ տիրել է վերջապէս կովկասահայ հասարակութեան և ժողովրդին։ Մենք յուսահատ չենք և կարծում ենք, որ մի անգամ արիւնով սրբագործուած դրութիւնը կունենայ իր նշանակալից հետեւանքները և այլեւս անդարձ պիտի անցնին-գնան հայ յեղափոխական շարժման առթիւ օրօր երգողների ժամանակները։ Անէծք այսուհետեւ լռութեան, համբերութեան և ամէն տեսակ „խոհեմութիւնների" առաքեալներին։ Նզո՜վք այսուհետեւ՝ կուից խուսափելու, հարուածի տակ ընկճւելու, զէնքից փախչելու, վախ ու երկիւղի տեսակէտից իւրաքանչիւր քայլ լուսաբանելու ընդունակ՝ ամէն կարգի խրտուիլակներին։ Մեղկ անդորրութիւնը չէ, որ պաշտպանում է մարդկային Իրաւունքը, այլ Կռիւը՝ անդուլ, անվկանդ։ „Առանց կուի չկայ իրաւունք, ինչպէս որ առանց աշխատանքի չկայ սեփականութիւն։ Որքան ճիշդ է ասուած թէ՝ „երեսիդ քրտինքով պիտի վաստակես քո հացը", նոյնքան ճիշդ է և այն՝ թէ „կուի մէջ միայն պիտի գտնես քո իրաւունքը"... Արդարութիւնը մի ձեռքում բռնած ունի կշիռ, միւս ձեռքում՝ սուր։ Աշխով նա կշռում է իրաւունքը, սրով պաշտպանում, հաստատում է նրան։ Սուրը առանց կշռի՝ մերկ բռնութիւնն է, կշիռը առանց սրի՝ իրաւունքի անզօրութիւնը" — այսպէս է տրամաբանում գերմանացի Երինգ, եւրոպական ամենահռչակաւոր իրաւաբաններից մէկը։

Թուլամիտ պէտք է լինել՝ այս խօսքերում պարունակւող ճշմարտութիւնը չըմբռնելու համար։ Սակայն եթէ իրաւունքը իր պաշտպանութեան համար կռիւ է պահանջում, հապա կռիւը իր յաղթանակի համար նեցուկ պիտի ունենայ՝ ուժ ը։ Ուժն է, որ կառավարում է աշխարհս, և մենք ձեռք կը բերենք մեր ուզածները՝ երբ ուժ կ'ունենանք։ Ո՞վ նոյնիսկ մի հասարակ լակէյի պաշտօն կը հաւատար այսօրւայ ռուս կայսր Նիկօլայ II-ի պէս ապուշին, եթէ նա չլինէր Աղէքսանդր III-ի որդին. ո՞վ այնպիսի մի էպիլէպտիքի, ինչպիսին է Գոլիցինը, հասարակ ախոռապահի դեր անգամ կը յանձնէր իր տանը, եթէ նա մեծացած չլինէր ռուս կայսերական աւազակաբունի մօտերքում։ Բայց ահա այդ այլասեռուած յիմարների, այդ ցուպագար լօբերի իրար վայել խմբակցութիւնը՝ յենուած որոշ տրադիցիաների և հպատակ ժողովուրդների տգիտութեան վրայ, իր տրամադրութեան տակ է առել միլիարդների բիւջէ և իշխում է, ինչպէս ուզում է։ Նոյնն է և Տաճկաստանում, ուր Աբդիւլ-Համիդ կոչւող հրէշը, եթէ ծնւած լինէր հպատակի ընտանիքում, վաղուց արդէն, իբրև ստորագոյն կարգի ոճրագործ, կախաղան կը լինէր հանուած։ Նոյնն է և ուրիշ միապետական ու կէս-միապետական երկրներում։

Համարձակութիւն է հարկաւոր՝ իշխողների լպիրշ երեսին շպրտելու համար իրենց պատշաճ տեղը մարդկային հասարակութեան մէջ. բայց այդ բաւական չէ։ Իշխողների կազմակերպուած ուժի դէմ հակադիր ուժ ստեղծելու համար անհրաժեշտ են. ա) ընդհանուր դրութեան և շահերի պարզ գիտակցութիւն, բ) ոչ մի տեսակ զոհողութիւնից յետ չկանգնելու անյողդողդ վճռողականութիւն և գ) համաձայնութիւն, համերաշխութիւն կռուելու կոչւող տարրերի մէջ։

Անդրադառնալով ընդհանուր հայկական կեանքին այս պայմանների տեսակէտից, կարելի է ընդունել, որ վտանգաւոր կացութեան գիտակցութիւնը օրէցօր աւելի և աւելի է ծաւալւում։ Հայ ժողովուրդը իր գլխաւոր և երկրորդական մասերում այսօր արդէն տեսնում է, թէ որքան նման են Համիդ և Նիկօլայ, քիւրդ և կօզակ, մէկը՝ գազանութիւնը և արիւնարբութիւնը զէնք ընտրած, միւսը՝ մարդատեացութիւնը և ցինիկութիւնը։

Զոհողութեան ընդունակութիւն ևս արտայայտեցինք. Պոլսի, Սասունի, Վանի, Զէյթունի և Տաճկահայաստանի բազմաթիւ ուրիշ վայրերի տուած արիւնին գնաց միանալու Գանձակում, Թիֆլիսում, Բագւում և այլ տեղերում յանուն հայ ժողովրդի իրաւունքների նահատակւածների արիւնը։

Համերաշխութեան սկզբունքը շեշտուած է արդէն այն գործօն հետաքրքրութեամբ, որով ռուսահայը հետեւեց տաճկահայկական դատին, իսկ այսօր գալիս է

նոր արտայայտութիւն գտնելու այն բողոքների մէջ, որոնցով տաճկահայ հոգևորականութիւնը, ժողովուրդը և ուրիշ դաղութներ ձայնակցում են ռուսահայի կուին՝ ռուս կառավարութեան դէմ:

Սակայն այդ բոլոր դրական երևոյթները կազմում են դեռ ևս անհրաժեշտ պահանջների սաղմը միայն: Մինչև այժմ ոչ զոհողութեան ինքնավստահ պատրաստակամութիւնը ընդգրկեց ազգութեան բոլոր դասակարգերը, ոչ էլ համերաշխութեան, միաբանութեան սկզբունքը դարձաւ կենդանի պահանջ, արիւն ու մարմին՝ ամենուրեք հալածւող հայ տարրի մէջ: Ժամանակ է վերջապէս, որ ներկայ մահաշունչ կացութեան դիմաց, երբ տաճկահայկական կոտորածներից յետոյ, գուցէ, գտնւում ենք կովկասահայկական կոտորածների նախատօնակին, կռւելու անդրդւելի վճռողականութիւնը և իրար խառնւելու, իրար հետ միանալու, իրօք մի ամբողջութիւն կազմելու միահամուռ, միահոգի պահանջը մեր ընդհանուր նշանաբանը դառնայ: Պատռել է հարկաւոր քարտէզների վրայ այս կամ այն աւազակապետի կամքով գծւած սահմանները, ջնջել է հարկաւոր այն աշխարհագրական ներկերը, որոնք մեզ բաժանում են իրարից և որոնք առհասարակ մշտական չեն, իսկ երբեմն շատ կարճատև են լինում: Ո՛չ մի բռնութիւն, ոչ մի հալածանք, ոչ մի սահման չէ կարող բաժանել մի ժողովուրդ, եթէ նա, տոգորւած ընդհանուր շահերի գիտակցութեամբ, ունի նաև կռւելու անսասան վճռողականութիւն և կապւած, միացած է դարերով սնւած ու պահպանւած ընդհանուր բնաւորների ու զգացմունքների առողջ զարկերակով:

Համարձակութիւն գահակալ խրտւիլակների և նրանց շրջապատող նրանց գործակից բոլոր դահիճների ու անբան ստրուկների դիմաց...

Ինքնավստահ վճռողականութիւն՝ ընդհանուր շահերի գիտակցութեամբ լուսավառւած...

Մէկ նպատակ, մէկ ամբողջութիւն՝ յեղափոխական անհաշտ կռւի համար...

ԱՏԵԼՈՒԹԻՒՆԸ

Հեռաւոր ու խաւարանիստ աքսորավայրէդ
Դէպի մեզ, դէպի մեզ, դէպի մեզ շտապէ,
Ո՜վ Ատելութիւն.
Ու մեր Տրտմութեան հետ քոյրաբար
Բռնաքարւած աւերակներուն վրայ հսկումի նստէ:

Սուգի, Արիւնի ու Զարշարանքի
Մահագոյժ գիշերներէն յետոյ,
Մաքառումներէն, Բաղխումներէն ու Ընդհարումներէն
Ալ ուժասպառ,
Երբ մեզ մեր հոգևարքին մէջ իսկ կը լլկեն՝
Վտարելով մեզ մեր կողոպտւած տաճարներէն,
Քեզի կը կառչինք, ո՜վ Ատելութիւն:

Մրրիկներուդ Հզօր շունչովը
Մաքրէ մեր հոգիները մարդկային այն բոլոր տրկարութիւններէն,
Որոնք մեր ստրկութեան կուռ կապանները հիւսեցին.
Մեր Նայւածքներուն մէջ Դժոխքիդ Հրդեհները դիր
Ու մեր Ձայնին մէջ Մռունչներդ ահարկու.
Մեր Բազուկներուն մէջ Կործանումիդ ուժը՝
Ու մեր Սրտերուն մէջ Թոյնիդ սահանքները հոսեցուր:

Որպէս զի Իժեր ու Վագրեր դարձած՝
Քալենք Քեզի հետ
Դէպի ապարանքները Ոճրագործութեան,
Մեր օրը ճակատները
Անոնց երկաթէ պարիսպներուն
Մոլեգնօրէն բաղխելու:

Այս Ջնջումի ու Հալածանքի ծանր օրերուն մէջ,
Ամէն Սրբութիւններէ առաջ
Դո՛ւ ես, որ սրբազան Ատրուշանի մը նման՝
Պիտի հրայրիս մեր այրիացած խորաններուն մէջ,
Ու մեր հինաւուրց վանքերու կոչնակները
Թախիծի իրիկուններուն մէջէն
Քու անունդ պիտի համերգեն:

Եւ անէ՛ծք այն կղերին,
Որ Քեզ մարել ճգնի,
Ու եօթն անգամ անէ՛ծք այն մօրը,
Որ իր զաւակը Քեզ չ՝ընծայէ:

Ու այսպէս վայրագ, անհաշտ ու քինայոյզ
Վագրերու և Ցովազներու վոհմակներու նման՝
Քեզի հետ, ո՜վ Ատելութիւն,
Թափառինք Ընդհարումներու ճամբաներուն վրայ,
Մինչև որ կարող ըլլանք արգասաւոր ու բարեբեր
ու հայրենի
Մեր դաշտավայրերուն ու սարահարթերուն վրայ
Խաղաղութեան տաղաւարներն ու վրանները տարածելու:

ՎՏԱՐԱՆԴԻ

ՄՈՒՇ–ՍԱՍՈՒՆ

Մուշ, 20/3 յուլիս 1903

Լուր մը ելաւ, թէ խումբ մը յեղափոխականներ անցած են Սասուն։ Այդ լուրի վրայ՝ կառավարութիւնը զօրք քաշեց Մշոյ դաշտի չորս կողմը և գիշերները սկսաւ հսկել ճամբաներն ու անցքերը։ 15 օր տևեց այդ կէս պաշարման դրութիւնը, որի միջոցին հայ գիւղացին չէր համարձակէր նոյնիսկ իր արտը գնալ։ Թէև քանի օր առաջ վերջացաւ պաշարումը, բայց այժմ ալ ուրիշ դրութիւն մը ստեղծուած է։ Զօրքը գիշերով կը յարձակի հայ գիւղերուն վրայ, օդին մէջ հրացան կը պարպէ ու կը սպասէ. չգիտենք՝ կ'ուզէ գիւղացին գիշերով դուրս քաշել-հանել և գնդակի բռնել, թէ կ'ուզէ իմանալ թէ զէնք ունի հայ գիւղացին, որպէս զի խուզարկէ և ձեռքէն առնէ։ Այս վերջինն աւելի հաւանական կը թուի, որովհետև երբ զինուած հայ մը կը նկատուի, թիւրքը կը կարծէ, թէ հազարներով զէնք կը բերէ հոս բաժնելու։

Երկու երեք շաբաթէ իվեր զօրքը Բաղէշի նահանգին մէջ տեղէ տեղ կը փոխադրուի, դեռ յայտնի չէ թէ ինչ նպատակով։ Սասուն զօրք բարձրացած է բաւական թուով, բայց դեռ յարձակում գործելու շարժում մը ըրած չէ։ Ստոյգ աղբիւրէ կ'իմանանք, թէ կառավարութիւնը դիմած է քիւրդ աշիրէթներուն և խրախուսած է, որ միանան զօրքին ու „յարձակին սասունցիներու և հոն եղող յեղափոխականներուն վրայ"։ Մի քանի աշիրէթներու պատասխանը շատ կտրուկ և խելացի եղած է։ Անոնք ըսած են. „Ասկէ առաջ ալ մեզի դրդեցիք այդպիսի բան մը ընելու, սակայն երբ եւրոպացի քննիչներ եկան, ամբողջ պատասխանատուութիւնը մեր վրայ ձգեցիք, իբր թէ ինքնագլուխ ըրած ըլլայինք այդ գործը։ Ու եթէ հայերու ցուցմունքը չ'ըլլար՝ թէ քրդերը չէին, այլ զօրքերը, եւրոպացին այժմ մեզ ջնջած կ'ըլլար։ Արդ եթէ կ'ուզէք այդպիսի բան մը ընենք, բերէք մեզի կայսերական ֆէրման մը այդ իմաստով, որ մենք մեր ծոցը պահենք նեղ պարագային գործադրելու համար. այն ատեն կը միանանք ձեզի՝ ջարդ մը տալու մէջ"։

Սահման, 10/23 յուլիս

Էրզրումում համարեա զօրք չէ մնացել։ Մուշը շորս կողմից բռնուած է զօրքերով և թնդանօթներով։ Ժողովուրդը ահ ու սարսափի մէջ է. ոչ ոք չի կարողանում քաղաքից դուրս գալ և երեկոյեան ժամը 6-ից ամէն մարդ փակւում է իր տանը։ Կառավարութիւնը խիստ կասկած է տածում, որ հայերը Մշոյ դաշտում խլրտում պիտի առաջ բերեն։ Լուրեր են պտտում, որ մի քանի գիւղեր դաշտում քանդուել են, ազգաբնակութիւնը լեռներն է ապաստանել, իսկ բանտերում տեղ չկայ, որ հայերով լեցնեն։ Սասունի շրջականներում Սուրբ Յովհաննու և Առաքելոց վանքերը թիւրքաց զօրքերով գրաւած են. ամէն մէկի մէջ տեղաւորուած է 60-70 զինուոր։ Եւրոպական հիւպատոսները շուտով Մուշ կը լինին։ Կառավարութիւնը պահանջել է մի քանի զինուած հայերից թողնել զէնքերը և անձնատուր լինել, բայց նրանք չեն համաձայնուել և հեռացել են լեռները։

Լրագիրներում երևացած այն լուրը՝ իբր Խնուսի մէջ ընդհարում է տեղի ունեցել, պէտք է վերագրել հետևեալ իրողութեան.

Մի քանի ժամանակ առաջ մի խումբ խեղճ ու անզէն պանդուխտներ, բնիկ բուլանիխցիներ, Կովկասից անցնում են սահմանը՝ հայրենիք վերադառնալու նպատակով։ Ճանապարհին պատահում են զինուորներ, որոնք կողոպտում են նրանց և յետոյ կոտորում՝ իբր յեղափոխականների։ Մի հաւատաք Պոլսից—մեծ մասամբ թիւրքական աղբիւրներից կամ թիւրք կառավարութեանը ծախուած գործակալներից—եկող հեռագիրներին և այլ տեղեկութիւններին։ Եթէ ոչ՝ խեղճ, անզէն, ողորմելի պանդուխտներին տմարդաբար կոտորելը՝ կը դառնայ, ինչպէս ներկայ դէպքում, հազարաւոր հայերի դիմադրութիւն կայսերական զօրքերին։

Սրտի առանձին ցաւումով պէտք է հաղորդեմ ձեզ նաև, որ ըստ նորագոյն կարգադրութեան, երկրից վերջին տարիները գաղթած հայերի կալուածները, նոյնիսկ շարժական գոյքերը, սկսել են գրաւել յարբունիս։

Բասէն, 14/27 յուլիս

Կարինի և Մուշի մէջ առևտրական յարաբերութիւնները կտրուել են՝ կառավարութեան հրամանով։ Կարինում՝ բերդը և քաղաքը պահպանելու համար մնացել են միայն թնդանօթաձիգները։ Վերցրած զօրքի մի մասն թողել են Խնուսի բերդում, իսկ մնացածը (870 հոգի) ուղարկել են Մուշ։

Կառավարութիւնը քրդերին գրգռելու համար լուր էր տարածել, թէ ֆէդայիները մտադիր են յատկապէս քրդերին կոտորել։ Սրանք էլ մեծ թուով պատրաստւում են Սասունի վրայ գնալու, իբր նախայարձակներ։ Կառավարութիւնը իր զօրքերը հանդէս պիտի հանէր քրդերից յետոյ, ինչպէս այդ արուեց Սասունի կոտորածի ժամանակ։ Քրդերի առաջին յարձակումը կատարւում է Շէնիքի վրայ, բայց հայերը քշում են քրդերին, իսկ զօրքը, փոխանակ օգնութեան հասնելու, հաւաքում է վրանները և իջնում Մուշ՝ իբր թէ քաղաքը պաշտպանելու նպատակով։ Երևի՝ բուն պատճառն այն է, որ Վանից Մուշ են հասել անգլիական և ռուսական հիւպատոսները ու ֆրանսիական փոխ-հիւպատոսը, որոնք հետաքրքրւում են երկրի դրութեամբ և որոնց աչքի առջև ներկայ հանգամանքներում կառավարութիւնը հայերին կոտորելը նպատակայարմար չէ համարում։

Ոճրագործ կառավարութեան տնկած կախաղանների շարքին մի հատ ևս աւելացաւ։ Արնոտ Հայաստանի մի այլ կէտում՝ Երզնկայում, Զէբի փաշայի աչքի առաջ, կախաղան բարձրացրին մեր թանկագին ընկեր Ռուբէնին, մի ժամանակ ամբողջ Երզնկան դողի մէջ ձգող Քեռուն։ Մասսային կոտորածներից յետոյ յեղափոխական գործը և հայի արդար վրէժի զգացմունքը խեղդելու համար՝ կառավարութիւնը կախաղանի և տերրորի ճանապարհն է ընտրել։ Էրզրում—Արամը, Բայազէդում՝ Յարօն և Խաչատուր վարժապետը, Բաղէշում՝ Մարգար վարժապետը, Էդիրնէյում՝ Պետրոսն ու Օննիկը, Երզնկայում՝ Քեռին... Արնոտ հայրենիքի նահատակնե՞ր. ե՞րբ պիտի ձեր վերջին հառաչից վրէժի մի հզօրագոյն աղաղակ կազմւի՝ ուղղուած բարբարոս թշնամուն... Ամենս էլ Մուշում կախուեց մի խեղճ մարդ, Ն ա զ ա ր անունով, որ իր կնոջը սպանելէր մահմէտականութիւն ընդունելու պատճառով։

ՀԱՅԿԱԿԱՆ ՅՈՅՅԵՐ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Հետեւեալ նամակները՝ ստացուած հետզհետէ մեր խմբագրութեան մէջ ականատես-թղթակիցներից՝ նկարագրում են անդրկովկասեան հայութեան տագնապը եւ ժողովրդական անսովոր ցասման ժայթքումները.

I. ԱԼԷՔՍԱՆԴՐՕՊՕԼ

Յուլիսի 28-ին ամենայն հայոց կաթողիկոսը՝ վերադառնալով երեկոյեան գնացքով դէպի Սեւան կատարած իր ճամբորդութիւնից, գիշերը հանգստացաւ տեղիս առաջնորդարանում, որպէս զի հետեւեալ օրը շարունակէ ճանապարհը դէպի Էջմիածին։ Կաթողիկոսի մուտքը Ալէքսանդրօպոլ՝ մեծ իրարանցում առաջ բերեց քաղաքի հասարակութեան մէջ. ահագին զայրոյթ էր տիրում ժողովրդի բոլոր խաւերում՝ ռուս կառավարութեան վերջին կարգադրութեան առիթով։

Միւս օրը առաւօտեան ժամը 9-ից՝ քաղաքի բոլոր լուսաւորչական եկեղեցիների զանգերը սկսեցին զօղանջել, որ նշան էր համախմբման։ Ժամը 10-ին համարեա բոլոր խանութները փակ էին արդէն և մօտ 5,000 հոգի, տղամարդիկ ու կանայք, հաւաքւած առաջնորդարանի դրան՝ սպասում էին կաթողիկոսի դուրս գալուն, որպէս զի յայտնեն նրան իրենց արդար բողոքը։ Ուղարկուեցին պատգամաւորութիւններ։ Սրանց բոլորին ունկնդրելով, կաթողիկոսը խոստացաւ ոչ մի թուղթ չստորագրել, ոչինչ չյանձնել և բողոքել կառավարչական կարգադրութեան դէմ։ Ապա քիչ յետոյ՝ շրջապատւած իր շքախմբով՝ դուրս եկաւ առաջնորդարանից և դիմեց դէպի կայարան։ Այդ րոպէին անսովոր իրարանցում ընկաւ ժողովրդի մէջ. բոլորը միաբերան գոչեցին. „Վեհափառ, մի՛ յանձնիր, մերժի՛ր, մենք քեզ հետ ենք“... Ահագին ամբոխը շրջապատել էր կաթողիկոսական կառքը և այդպէս ուղեկցեց նրան մինչև կայարան, բոլոր ժամանակ կրկնելով. „Վեհափառ, բողոքի՛ր, մերժի՛ր“...

Տպաւորութիւնը անպատմելի է։ Ոստիկանութիւնը ամբողջ կազմով լուռ հետեւում էր ժողովրդային այդ հոսանքին։ Կայարանում յուզմունքը այնքան մեծ էր, որ քարեր նետուեցին ժանդարմների վրայ, չնայած, որ վերջիններս բոլորովին խաղաղ դիրք էին բռնել։ Ուրիշ միջադէպեր ևս տեղի ունեցան։ Այդպէս, ճանապարհին դէպի կայարան՝ երբ գաւառապետի օգնականը, կամենալով դիւրութիւն տալ կաթողիկոսական կառքին արագ ընթանալու, փորձեց ինքը ևս մտնել կառքի մէջ, ժողովուրդը իսկոյն վար քաշեց նրան կառքից, նկատելով, որ „իր պէս աղտոտների տեղը չէ այն“...

II. ԵՐԵՒԱՆ

Հայոց եկեղեցական-վանական կալւածքների յարբունիս գրաւման կայսերական հրամանը խիստ դիմադրութեան հանդիպեց։ Ռուսահայը բարոյապէս և հոգեպէս այնքան էլ մեռած չէր, որ լուռ ու մունջ տանէր ամէն տեսակ ոտնձգութիւն, ազգային ամէն տեսակ վիրաւորանք։ Գալիցինի տարիներից իվեր հայերի դէմ հանած հալածանքները այնքան լցրին դառնութեան բաժակը, որ այս անգամ, անհեռատես սալդաթի վերջին յափշտակութեան փորձը ցնցեց հայ ժողովրդին, ստիպելով նրան դիմադրութիւն ցոյց տալ, կռիւ յայտարարել, զէնքի դիմել՝ բռնաբարւած իրաւունքները պաշտպանելու համար։

Այդ մտքով օգոստոսի 3-ին մի ցոյց կազմեց Երևանը, այն Երևանը, որ մեռած էր հաւատում, բայց որը շարժւեց և ուժգին շարժւեց։

Քաղաքի կենտրօնում, Նորակառոյց Ս. Լուսաւորիչ եկեղեցում, այդ օրը Մելքիսեդեկ եպիսկոպոս Մուրադեանի մահուան պատճառով կատարւելու էր հոգեհանգիստ, ուր ներկայ պիտի լինէր նաև առաջնորդ Սուքիաս արքեպիսկոպոսը։ Մի փոքրիկ շշուկից՝ եկեղեցի թափւեց ժողովրդի ահագին բազմութիւն։ Ծամասացութիւնը աւարտելուց յետոյ, երբ առաջնորդը հիւսիսային դռնից դուրս գալով՝ ուզում էր հեռանալ, նրան կանգնեցրեց ժողովուրդը, պահանջելով անմիջապէս Էջմիածին գնալու տանել ժողովրդի կենդանի բողոքը կաթողիկոսին և միաբանութեան։ Առաջնորդը հրաժարւեց, պատճառաբանելով, որ նա մի անգամ եղել է արդէն Էջմիածնում։ Ժողովրդի աղաղակը՝ „նորից գնացէք, պահանջում ենք, որ գնաք“, օդը թնդացրեց։ Առաջնորդի յամառելը առաջ բերեց աղմուկ, որը ստիպեց նրան քաշւել եկեղեցի, մինչև որ յայտնւեց պօլիցիական պրիստաւը։ Այդ ժամանակ բացւեց մի խումբ մարդկանցով պաշտպանւած պարսպի երկաթապատ դուռը և առաջնորդը յուզմունքի ու աղաղակների մէջ, մօտենալով հրաւիրւած կառքին, նստեց կառքը։ Որոշ նշանի վրայ՝ մի խումբ մարդիկ առաջ անցան ու բռնելով ձիերի սանձերից՝ սկսեցին կամաց-կամաց շարժւել դէպի գլխաւոր Աստաֆեան փողոցը, բանի տեղ չդնելով պրիստաւի թախանձանքը՝ ճանապարհ տալ կառքին։ Նաղարեան փողոցը լցւեց մօտ 5,000 հոգուց բաղկացած ամբոխով, որը անվերջ աղաղակում էր՝ „Բոլորը, բոլորը դէպի Էջմիածին“։ Ժողովրդի ծայրը Աստաֆեան փողոցը հասնելով՝ ծռւեց դէպի քաղաքային այգին և թեքւեց դէպի պօլիցիայի հրապարակը և ապա նոյն աղաղակներով ու ցոյցերով ուղղւեց դէպի այն փողոցը, ուր գտնւում է Նահանգապետի տունը։ Սկզբում պօլիցիան ապուշ կտրած՝ կորցրեց գլուխը, պրիստաւներ և ոստիկաններ իրար անցան ու նրանց գործ դրած ջանքերը ապարդիւն եղան։ Այդ օրը Նահանգապետը ամարանոցից վերադարձել էր և իր բնակարանումն էր, ուր գտնւում էր նաև ոստիկանապետը։ Աղաղակը երկուսին էլ սթափեցրեց. ոստիկանապետը, գոյնը թռած, դուրս պրծաւ ամբոխի առաջ, փորձեց կանգնեցնել հոսանքը, մի երկու խօսք փոխանակեց կառքի մէջ նստած և ամբոխով սխմւած առաջնորդի հետ, բայց ժամանակ չտրւեց խօսքը վերջացնելու. ոստիկանապետի ճիգերը ապարդիւն անցան։ Ամբոխը գրոհ տւեց, օդի մէջ փայտեր պտտեցին, մէկը հասաւ ոստիկանապետի թեւին. ժողովուրդը շարժւեց վիթխարի ուժով, իր հոսանքի հետ քշելով առաջնորդի կառքը։ Եւ յաղթական կերպով անցնելով Նահանգապետի տան առջևից, ռուսաց նորակառոյց եկեղեցու տախտակեայ ցանկապատի ու մեծ այգու միջի անցքով և քաղաքի մեծ հրապարակով՝ բարձրացաւ դէպի առաջնորդարան։ Սակայն դեռ առաջնորդարան չհասած՝ հոսանքը ծռւեց դէպի Հրազդանի կամուրջը նոյն աղաղակներով ու ցոյցերով։ Ուղեկցող ոստիկանները արդէն սարսափի տակ, կարծէք մոռացել էին, որ իրենք ոստի-

կաններ են։ Հազարաւոր մոլեգնած ամբոխի հոսանքը հասաւ կամրջին և բռնեց այգիների մէջ ձգւած Էջմիածին տանող ճանապարհը։ Ոստիկանապետը դարձաւ քաղաք, յայտնեց նահանգապետին, որը անձամբ հեռագրատուն վազելով, հրահանգներ տւեց Էջմիածնի ոստիկանութեանը։ Ոստիկանապետը առնելով իր հետ ստրաժնիկների խումբը, շտապեց դէպի Էջմիածին։ Նրանց ետևից ուղարկւեց նաև երկու վաշտ զինւոր։ Դէպի Էջմիածին դիմող բազմութիւնը թողնելով Երևանում թափթփուկներ՝ ճանապարհին հետզհետէ աճեց, իր հետ միացնելով բոլոր հայերին, որոնք պատահում էին։ Ոստիկանապետը ստրաժնիկներով հասաւ ցուցարարներին, միմիայն մի անյաջող փորձ արեց կանգնեցնելու նրանց, ու իսկոյն օդի մէջ թռան քարեր և ստրաժնիկները քամակ դարձրին։ Երևանից ժամը 12-ին դուրս եկող այդ խուռն ամբոխը Փարաքար գիւղը հասաւ ժամը 2-ին։ Ամէն ինչ խաղաղ էր. ոտով քայլող ահագին շղթային հետևում էին մօտ 15 կառքեր։ Ուղեկցող ստրաժնիկները գնում էին, որպէս ցուցարարները։ Այդպէս հոսանքը մօտենում էր Էջմիածնի սահմաններին, երբ ճանապարհը յանկարծ փակւած գտնւեց մի վաշտ զինւորներով և 50-60 ստրաժնիկներով։ Վաղարշապատից եկած զօրքը միացաւ Երևանի զօրքին և նրանց թիւը հասաւ 250-ի։ Արգելքը լուրջ էր, դիմադրութիւնը ուժեղ. հոսանքը շարժւեց, ամբոխը կրակ կտրեց, սրերը շողշողացին, զօրքը զալպով արձակեց հրացանները, բայց օդի մէջ, ժողովրդի միջից ևս տրաքեցին ատրճանակներ, զալպերը կրկնւեցին, օդի մէջ թռան քարերի կոյտեր, շղթան պատռւեց և հոսանքը առաջացաւ՝ տալով մի քանի վիրաւորւած զինւորներ և ցուցարարներ։ Շղթայելու այդպիսի փորձեր կրկնւեցին մի քանի անգամ, բայց անօգուտ, և հինգ ժամից յետոյ հազարաւոր ամբոխը նոյն աղաղակներով ու ցոյցերով մտաւ Վաղարշապատ, ժողովրդի ոգևորւած ողջոյններով։ Ամբոխը ճեմարանի մուտքով լցւեց վանքի բակը։ Վեհարանի մուտքը պահող զինւորները դողդոջալով մի կողմ քաշւեցին։ Տաս հոգուց մի պատգամաւորութիւն մտաւ վեհարան՝ իր հետ առած առաջնորդին։ Ծերունի կաթողիկոսի դիմաւորումը ազդու էր, մտքերը խաղաղացնող։ Ժամը 7-ին ցուցարարները վերադառնում էին նոյն յաղթական կոչերով։ Տպաւորութիւնը հսկայական էր...

Բանտարկւած են 30-ից աւելի հայեր։

III. ԷՋՄԻԱԾԻՆ

Գրում եմ օգոստոսի 24-ի ցոյցի մասին, որին ականատես եղայ հէնց այստեղ, Էջմիածնում։

Կաթողիկոսը, երկիւղ կրելով ժողովրդական մեծ համախմբումներից ու արիւնհեղութիւններից, կարգադրել էր մեռոնի օրհնութիւնը կատարել նշանակւած ժամանակից առաջ և գաղտնի կերպով։

Գաղտնիքը այնուամենայնիւ հրապարակ եկաւ և շրջակայ գիւղերից շատ կարճ ժամանակւայ մէջ հաւաքւեց Էջմիածնում մօտ 3 հազար ժողովուրդ։ Այդ բազմութիւնից 400-500 կանայք վճռում են իրենց կողմից յատկապէս մի ցոյց անել։ Ժամերգութիւնը վերջանալուց յետոյ, կանայք խռնւած, դիմում են վեհարանի բակը, երգելով և „Կեցցէ“ ու „Կորչի“ աղաղակելով.— „Կեցցէ՛ յեղափոխութիւն, կեցցէ՛ հայ ժողովուրդը, հայ եկեղեցին և նրա անբռնաբարելի իրաւունքը. կորչի՛ բռնակալութիւնը“։ Եւ ապա երգւեցին ազատ, յեղափոխական բովանդակութիւն ունեցող զանազան երգեր։ Դրանից յետոյ կանանց միջից ընտրւեցին մի քանի պատգամաւորներ՝ որոնք ներկայացան Հայրիկին։

Նրանք միաբերան կրկնեցին հազար անգամ արդէն կրկնւած յայտնի բանաձևը.— „Հայ ժողովուրդը առաջարկում է Վեհափառին՝ բոլոր ուժով բողոքել ռուս բռնակալ կառավարութեան վերջին կարգադրութեան դէմ՝ հայ-եկեղեցական կալւածքները յափշտակելու նկատմամբ և ո՛չ մի դէպքում կամովին չյանձնել կալւածքները։ Թող կառավարութիւնը բռնի ուժով խլի, որպէս աւազակ“... Հայրիկը սիրով լսում է կանանց բողոքը, որ առաջինը չէր, իհարկէ, և խոստանում է մինչև վերջին ծայր դիմադրել ու երբէք չյանձնել կամաւոր կերպով։

Արտասանւում են սրտառուչ, զգացւած խօսքեր, արտասւում են թէ կաթողիկոսը և թէ կանայք։ Արտասուքները, իհարկէ, չպիտի փրկեն մեզ, և(ես արձանագրում եմ միայն կատարւած իրողութիւնը։ Այնուհետև նորից երգելով, աղմուկներով ցրւում են։ Ոստիկանութիւնը լուռ հանդիսատես լինելով՝ վերջը երկու հոգու բանտարկում է տղամարդկանցից և մի քանի ժամից յետոյ արձակում։

Շարունակ նորանոր պատգամաւորներ և խնդրագրեր են թափւում Էջմիածին, միևնոյն պահանջով—չյանձնել կամովին, բողոքել բոլոր հնարաւոր միջոցներով։

Սաստիկ յուզւած են Արարատեան դաշտի բոլոր գիւղերը, առանց բացառութեան. Սուրմալուի, Սարդարապատի, Աշտարակի, Օշականի, Բաշ-Գեառնւայ և այլ գիւղերի հասարակութիւնները, առանձին-առանձին, հաւաքական որոշումներով բողոք են ներկայացրել կաթողիկոսին։ Բոլորն էլ միևնոյն ոգով, գրեթէ միևնոյն բովանդակութեամբ։ Առանց չափազանցութեան կարելի է ասել, որ Անդրկովկասի բոլոր հայաբնակ վայրերը — գիւղերն ու քաղաքները — սաստիկ գրգռւած են և կատաղի կերպով բողոքում են կատարւած աւազակութեան դէմ։

Իբրև այդ խնդրի հետ կապւած իրողութիւն, աւելացնեմ, որ վերին աստիճանի անամօթ դիրք է բռնել Սուրմալուի գաւառապետը։ Առանց այն էլ այդ անզգամը շատ լրբութիւններ է արել գաւառում. մի կատարեալ հրէշ, որ ամէն ներելի և աններելի միջոցներով ուղղակի խեղդամահ է արել Սուրմալուի հայ աղգաբնակութիւնը, իսկ մասնաւորապէս վերջին դէպքերի նկատմամբ նա իր լրբութիւնը գագաթնակէտին է հասցրել։ Սուրմալուն չէզոք դիրքի մէջ է դրել. բոլոր ճանապարհները փակել է ստրաժնիկներով—բառացի կերպով կտրւած է հաղորդակցութիւնը։ Իգդիրի գիւղերը և դէպի Էջմիածին անց ու դարձողներին բռնում, լաւ ծեծ է տալիս և ապա բանտարկում։

Օգոստոսի 23-ին Իգդիրի գաւառից մի քանի հարիւր հոգի ուղեցին զօռով ճեղքել ստրաժնիկների շղթան և գալ Էջմիածին մեռնօրհնութեան, բայց գաւառապետը աւելի ուժեղացրել էր հսկողութիւնը, և տեղի ունեցաւ կռիւ. մի կողմը՝ փայտերով ու քարերով զինւած ժողովուրդ, միւս կողմը՝ կառավարութեան զինւած կօզակներ ու ստրաժնիկներ։ Սպանւած են հայերից մի-երկու հոգի, վիրաւորւած են մի քանիսը, բանտարկւած են շատերը։ Նման ընդհարում տեղի է ունեցել մի շաբաթ առաջ Աշտարակի, Օշականի, Ղզլթամիրի և այլ հասա-

բակութիւնների ու գաւառապետի, պրիստաւի և ոստիկանների միջև:

Հայրիկը երկու կոնդակ է ուղղել Սինօդին, որով արգելում է կալուածքները յանձնել: Մի կոնդակ էլ ուղղել է բոլոր կոնսիստորիաներին, գործակալներին և երեսփոխներին, որով արգելում է առանց իր գիտութեան յանձնել ոևէ կալուածք կամ եկեղեցական գոյք, դրամ ևլն: Նոյն մտքով երիտասարդութիւնը մի թռուցիկ է ցրւել երեսփոխներին ու գործակալներին:

Սինօդի բոլոր անդամները և թեմակալ առաջնորդները մէկ-մէկ հրաժարական են ներկայացրել կաթողիկոսին. մի երկու ժողով է տեղի ունեցել թէ սինօդի անդամների, թէ առաջնորդների և թէ աչքի ընկնող միաբանութիւնների մէջ, ուր կազմւել են արձանագրութիւններ բոլորի ստորագրութեամբ, որ ոչ մի դէպքում կամովին չպիտի յանձնեն կայքերը:

IV. ԿԱՐՍ

Ուրբաթ, օգոստոսի 22-ին, եկեղեցում ծանուցւեց, որ հետևեալ օրը 23-ին հսկում պիտի կատարւի, իսկ 24-ին հանդիսաւոր պատարագ և հոգեհանգիստ Մելքիսեդեկ եպիսկոպոս Մուրադեանի համար: 23-ին, շաբաթ առաւօտեան, զանգակի առաջին ղօղանջը լսելուն պէս, բոլոր խանութները փակւեցին, նոյնիսկ սրճատները, գինետները, որ երբէք չեն փակւում ոչ մի տօնի առիթով: Տաս րոպէում փողոցը ամայացաւ և ժողովրդի մեծ բազմութիւն շտապեց դէպի եկեղեցի, ուր այնքան մարդ էր հաւաքւել, որ ներսը տեղ չլինելու պատճառով՝ շատերը պարսպում էին չոքել: Լուռ ու մտախոհ՝ ժողովուրդը ծնկաչոք ձայնակցում էր տխուր ու սրտառուչ մեղեդիներին: Ոստիկանութիւնը զարմանքով հետևում էր հեռուից ժողովրդի այդ արտասովոր աղօթքին ու տօնին:

Օգոստոսի 24-ին, կիրակի օրը, առաւօտից սկսեցին քաղաք դիմել գիւղացիների բազմաթիւ խմբեր, շատ տեղերից քահանաներով ու երեցփոխներով: Եկւորների մէջ կային նաև կին ու երեխաներ: Նրանք իրենց հետ բերում էին բողոքագրեր, որով խնդրում են Հայրիկին չյանձնել մեր աւանդական սեփականութիւնները: Բողոքագրերը, որոնց թիւը հասնում էր 50-ի, կրում էին բազմաթիւ ստորագրութիւններ: Գիւղական տարրի հաւաքումը շարունակեց մինչև հանդէսի վերջերը: Չը նայելով, որ խորհուրդ էր տրւած զէնք չվերցնել հետները, շատերը հագուստի տակից զինւած էին դաշոյններով, ատրճանակներով, ուրիշները՝ փայտերով ու մահակներով: Գիւղացիների այդ հոծ բազմութիւնը քաղաքացիների հետ — մօտ 6 հազար հոգի — լցրել էր եկեղեցին, մի խոշոր մասն էլ ներսում տեղ չգտնելով՝ մնացել էր դուրսը: Գիւղացիք այնքան շատ էին, որ քաղաքացիները նրանց մէջ համարեա չէին նշմարւում: Առաւօտից քաղաքում, բառի բուն նշանակութեամբ, ոչ մի բաց խանութ չկար առևտրի համար: Նոյնիսկ կառապանները չէին լծել կառքերը: Ժողովրդի մէջ նկատւում էր անսովոր տրամադրութիւն. բոլորը տխուր, մտազբաղ էին, ժպիտի նշոյլ անգամ չէր երևում և ոչ մի դէմքի վրայ: Հանդիսաւոր պատարագի ժամանակ՝ զգացւած երգում էր քառաձայն խումբը: Յուզիչ, տխրալի շեշտով էին արտասանւում քահանաների ու դպիրների մեղեդիներն ու աղօթքները: Դպիրներին թոյլ չտւին յիշել կայսրի անունը: Պատարագի միջոցին քահանաներից մինը ազդու քարոզ խօսեց: Ժողովրդի յուզումը սաստկացաւ: Հոգեհանգստից առաջ, որ կատարւելու էր Մելքիսեդեկ Մուրադեանի համար, մի օրիորդ ճառ կարդաց: Դրանից յետոյ մէկը երգեց. „Ո՜վ հայոց Աստուած“... Րոպէն սրտաշարժ էր. ժողովրդին տիրեց աննկարագրելի յուզում: Այս ու այն կողմից լսւում էին զսպւած հեկեկանքներ, որ քանի գնում սաստկանում էին: Մի պարոն խօսեց վերին աստիճանի ցնցող, ոգևորիչ ճառ: Ճառի ամէն մի պարբերութիւնից յետոյ լսւում էր խլացնող, բարձրաձայն հեկեկանք... Լալիս էին ամէնքը՝ կին ու տղամարդ, մեծ ու փոքր, ծեր ու երիտասարդ: Երբ ճառասացը մի պարբերութեան մէջ հարցական շեշտ արեց դէպի ժողովուրդը, վերջինս ահարկու ձայնով որոտաց 5-6 անգամ. „Պատրա՛ստ ենք, պատրա՛ստ ենք“, այսինքն պատրաստ են արեան գնով պաշտպանել իրենց դարաւոր իրաւունքները... Վերջացաւ և հոգեհանգիստը, բայց լարւած, էլէքտրականացած ժողովուրդը երկար ժամանակ չէր ուզում հեռանալ եկեղեցուց: Վերջապէս խնդրեցին գիւղացիներին դուրս գնալ, որպէս զի քաղաքացիները կարողանան շարժւել և մօտենալ ստորագրելու խնդիր-բողոքագիրը կաթողիկոսի հասցէին: Գիւղացի կանայք յանդիմանում էին քաղաքացի կանանց, որ վերջիններս զուգւած, զարդարւած են եկել եկեղեցի. Նրանք ասում էին. „Չէի՞ք կարող սև գլխակապերով գալ. խօմ հարսանիք չէ՞ք եկել“... Կանանց առաջարկում էին ցրւել, ասելով, որ բաւական է տղամարդկանց ստորագրութիւնը, բայց նրանք չհեռացան: Դուրս եկաւ մի աղքատ պառաւ և պահանջեց, որ իրեն թոյլ տան ամենից առաջ ստորագրել: Անգրագէտ էր, մի ուրիշը ստորագրեց նրա տեղ: Այնուհետև շարունակւեց տղամարդկանց և կանանց խառը ստորագրութիւնը: Դուրսը, բակում, ամբոխը խմբերի բաժանւած, շարունակում էր խօսել յուզւած ու ոգևորւած. գիւղացիներից շատերը թերթեր, թռուցիկներ էին խնդրում սրանից, նրանից... Վերջապէս կարողացան ժողովրդին համոզել, որ ցրւեն: Ժողովուրդը ալիքների նման սկսեց լցնել ամայացած փողոցները, բայց էլի չէր ուզում ցրւել:

Մաճատիա գիւղի տանուտէրը, որ հրաժարւել էր ստորագրել բողոքագիրը, սարսափելի ծեծ կերաւ գիւղացիներից և քաղաքացիներից, այնպէս որ նրա դէմքը արիւնով ու ցեխով ծածկւեց: Պրիստաւի օգնականը սուրը հանած՝ յարձակւեց տղայոց վրայ, բայց տղերքը իսկոյն սուրը խլեցին ձեռքից և սաստիկ ծեծ տւին նրան բռունցքով, փայտով, ոտով. ցեխերի մէջ կոխեցին և շորերը պատռտեցին. զոհը փախաւ: Ոստիկանատան բոլոր միւս ծառայողները և պրիստաւը մի րոպէ անգամ չէին հեռանում ոստիկանատան պատերի մօտից: Սաստիկ վախեցած՝ նրանք հեռուից հետևում էին ամբոխի շարժման: Երբ պրիստաւին իմաց տւին փողոցի մէջ կատարւածի մասին, իսկոյն ձի բերել տւեց և դատարկ փողոցներով գնաց ու հրաւիրեց տեղական զօրքը (հայ զինւորներին չէին վերցրել): Զինւորներ, ստրաժնիկներ, գարադավոյներ հետը առած, ձի նստած և ձեռքը ատրճանակին դրած՝ պրիստաւը սկսեց շրջել փողոցները և հրամայել, որ ցրւեն: Բայց ժողովուրդը հանդարտ ու կամացուկ պտտւում էր՝ առանց մազաչափ ուշադրութիւն դարձնելու նրա սպառնալիքներին ու բացականչութիւններին: Գիւղացիները այս ու այն կողմից բացականչում էին. „մի՛ք վախենալ, մի՛ք շտապիլ, կամա՛ց-կամա՛ց“: Նոյն օրը երև-

կոյեան գաւառապետը գիւղից վերադարձաւ թէ չէ, իսկոյն հրամայեց նորից զօրք բերել և ցրուել քաղաքում, բայց քաղաքացիները մինչև գիշերուայ ժամի 10-ը սովորականից աւելի մեծ խմբերով դեռ ման էին գալիս փողոցներում։ Շատ տեղերում երիտասարդական խմբեր, բաղկացած 20-30 հոգուց, շրջում էին քաղաքի կենտրոնական մասերում և յեղափոխական երգեր էին երգում։ Սարսափած ոստիկանութիւնը բնաւ չմոտեցաւ նրանց։ Նոյնիսկ ոստիկանատան առաջ կանգնած՝ բարձրաձայն յեղափոխական երգեր երգուեցին։ Այդ բոլորը տևեց մինչև խոր գիշեր։

Գաւառում Կորիս գիւղի քահանան, որ մի զզուելի անցեալ ունի, ընդդիմացել է բողոքագիրը ստորագրելուն, բայց զայրացած գիւղացիները իրենք վերցրել ու ստորագրել են, իսկ քահանային, ձեռքից առնելով եկեղեցու բանալին, դուրս են քշել գիւղից։ Ապա պատրաստել են մի խնդրագիր կաթողիկոսին, որ հրաժարեցնէ նրան քահանայութիւնից։

V. ԳԱՆՁԱԿ

Օգոստոսի 29-ին, առաւօտեան ժամը 10-11-ին, Գանձակի հայ ժողովուրդը թւով մօտ 10 հազար հոգի—այր, կին, տղայ և աղջիկ—խուռն բազմութեամբ հաւաքուելով քաղաքի վերի հայ եկեղեցու մօտ՝ դիմում է դէպի վարի եկեղեցին, ուր գտնուում է և առաջնորդարանը, որպէս զի յաջորդ Բէնիկ վարդապետին յայտնէ իր խնդիրքը եկեղեցապատկան կալուածքների յափշտակման մասին՝ վախենալով, որ մի գուցէ հոգևորականութիւնը յօժարակամ յանձնէ կառավարութեան։ Ժողովուրդը նպատակ ունէր պահանջել բացարձակ դիմադրութիւն։ Ճանապարհին ոստիկանապետը իր պահնորդախմբով ընդառաջ է գալիս և խնդրում է ցրուել։ Դրան ի պատասխան՝ ամբոխը քարեր է նետում և յետ մղելով ոստիկաններին՝ շարունակում է ճանապարհը դէպի առաջնորդարան։ Տեղ հասնելով, ժողովուրդը պահանջում՝ է Բէնիկ վարդապետին։ Բէնիկը չի դուրս գալիս։ Ժողովուրդը վրդովուած՝ կրկնում է իր պահանջը, սպառնալով ներս խուժել, և սկսում է քարեր նետել դէպի լուսամուտները. ջարդում են շատ ապակիներ։ Վերջապէս երևում է Բէնիկը և սկսում է հանգստացնել ժողովրդի յուզմունքը, յայտնելով միաժամանակ, որ ոչինչ չի յանձնուի յօժարակամ, ինչպէս այդ մասին արդէն հրահանգ է ստացուած վեհափառ կաթողիկոսից։ Այդ ժամանակ վրայ է հասնում ոստիկանապետը և սկսում է մեղադրել Բէնիկին, թէ իբր այդ բոլորը նա է ծրագրել։ Նոյն րոպէին իմաց է տրուում ոստիկանապետին, թէ պահանջուած վաշտը կամուրջը անցնելով՝ բարձրանում է արդէն դէպի եկեղեցին։ Ոստիկանապետը ինկատի ունենալով ժողովրդի լարուած տրամադրութիւնը, հեռացնում է վաշտը, բայց շուտով միջամտում է փոխ-նահանգապետը—ամէնից առաջ մի անձնաւորութիւն, հրէա՝ մկրտուած ռուս—որ հրամայում է յետ կանչել զօրքը։ Երկրորդ և երրորդ անգամ հրամայեց ամբոխին ցրուել, բայց և ամէն անգամ ամբոխը պատասխանեց քարերի կարկուտով ու ատրճանակներով։ Յանկարծ բազմութեան միջից դուրս է գալիս մի երիտասարդ արհեստաւոր և դիմելով փոխ-նահանգապետին՝ ասում է. „մենք չենք կամենում մեր ազգային գոյքը ձեզ տալ և չենք ուզում քեզ պէս փոխել մեր դաւանութիւնը, աղտո՛տ“։ Պատրաստը իսկոյն հանում է ատրճանակը և տեղն ու տեղը սպանում երիտասարդին։ Ապա հրամայում է կրակ տեղալ։ Գնդակահարութիւնը տևում է կէս ժամ։ Վիրաւորուել են մի զինուոր և մի քանի ոստիկաններ։ Անմիջապէս մահ գտնողներ եղան հայերից նոյն ժամին 10 հոգի, վիրաւորուածներ՝ 70, որոնցից 20 հոգի շուտով վախճանուեցին։ Առաջին զոհերից մէկն է մի 13 տարեկան օրիորդ, որի բերանից անցնելով՝ մահացու գնդակը փշրում է ամբողջ գանկը։ Մի ուրիշ երեխայ, գնդակահար ընկնելով՝ ոտերի տակ է գտնում իր մահը աղիողորմ գաղրումներով։ Տեսարանը դժոխային էր. . .

Հետևեալ օրը ամբողջ քաղաքը լցուեց ոստիկան-պահապաններով։ Կարգադրուեց միաժամանակ՝ երկաթուղու կայարանում Թիֆլիզ գնալու տոմսակ չծախել հայերին։ Մէկը, որ մինչև այդ կարգադրութիւնը գնած էր տոմսակ, անմիջապէս ձերբակալուեց։

VI. ԹԻՖԼԻՍ

Օգոստոսի 30-ին տեղիս պաշտօնական թերթը հաղորդեց Գանձակում տեղի ունեցած արիւնոտ դէպքը, իհարկէ, աղաւաղումներով։ Լուրը արագութեամբ տարածուեց ժողովրդի մէջ. այդ օրը ամբողջ Թիֆլիսի ազգաբնակութիւնը խօսում էր ռուսաց բարբարոսութեան մասին։

Կիրակի, 31-ին, Վանքի Մայր-եկեղեցում պիտի կատարուէր հոգեհանգիստ՝ Գանձակի մէջ նահատակուած հայերի յիշատակին։ Դեռ պատարագը չսկսուած, ժողովուրդը, հետզհետէ ստուարանալով, լցրեց եկեղեցին. մեծ բազմութիւն ևս մնաց դուրսը։ Ինտելիգենտ տարրը աչքի էր ընկնում իր թւով։ Ընդհանուր խոսակցութեան առարկան Գանձակի դէպքն էր։ Տիրում էր արտակարգ յուզմունք. ձեռքից ձեռք էր անցնում „Հայ ժողովրդին“ ուղղուած պրոկլամացիան, որ կուռի հրաւէր էր։

Պատարագը վերջանալուց՝ հոգևորականութիւնը դուրս եկաւ բակը և սկսեց կատարել հոգեհանգիստ։ „Տէր Ողորմե“-ի ժամանակ ամբողջ բազմութիւնը լոքեց։ Բոպէն հանդիսաւոր էր և սրտաճմլիկ։ Ամէնքը պատրաստ էին կատաղութեան արտասուք թափելու. . .

Բակի մէջ ցիրուցան կանգնած էին ոստիկաններ և թաղականներ, դուրսը՝ բակի դրան մօտ՝ չորս-հինգ հեծելազինուորներ։ Քիչ հեռու, Ներսիսեան դպրոցի այրուած կրպակներում, կար պահեստի համար 100 հոգու չափ հեծելազօրք։ Երբ հոգեհանգիստը վերջացաւ, հայր Տէր-Արարատեանը, ասում են, նեղվելք արտասանեց կառավարութեան հասցէին. անմիջապէս օդը նետուեցին պրոկլամացիաներ և լսուեցին մի շարք „կեցցէ՛ներ“։ Ոստիկանները միջամտում են և պահանջում լռել. նրանք ուզում են մի երկուսին քարշ տալով դուրս անել, բայց ժողովուրդը գրոհ է տալիս և սկսում է ծեծը։ Մի քանի ոստիկաններ ու թաղականներ դրսից դէպի ներս են սլանում, բայց բռնուում ու ծեծուում են։ Ամբոխը անընդհատ քարեր է նետում և ատրճանակներ է պարպում պոլիցիականների վրայ։ Այդ սոսկալի իրարանցումի միջոցին մէկը բարձրացած զանգակատուն՝ անընդհատ զանգահարում էր։ Հեծելագունդը քշում է ձիերը և սկսում է մարդկանց ոտնահարել ու մտրակահարել։ Կազակների խումբը, միացած ստրաժնիկների հետ, անխնայ ծեծում է հանդիպողներին։ Զօրքը միաժամանակ գնդակներ է արձակում։ Մի երեխայ գնդակահար եղաւ

մի անգութ ստրաժնիկի ձեռքով։ Մի գործաւոր ծանր վէրք ստացաւ։ Շատերը վիրաւորուեցին։ Ձերբակալուեց Տէր-Արարատեան քահանան երեք ուրիշ հայերի հետ։ Երբ ամբոխը ցրուեց և բակը դատարկուեց, եկեղեցու դուռը կողպեցին և պահապաններ կանգնեցրին։

Դէպքից յետոյ Թիֆլիսի փողոցներում ձիով շրջում էին կազակների խմբեր և բազմաթիւ ոստիկաններ։

Հետևեալ օրը եկան արձանագրելու Ղերսիսեան դպրոցի գոյքը։ Նշանակուած ժամին՝ դպրոցի հոգաբարձուներից ոչ ոք չեկաւ, և յանձնաժողովը նրանց բացակայութեամբ կազմեց արձանագրութիւնը։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԱՄԱԿ ՎԱՆԷՆ

6/19 յունիս, 1903

Մայիսի 19-ին, երկուշաբթի վաղ առաւօտեան, ժողովուրդը հանգիստ իր աշխատանքին կերթար. սակայն գետի եզերքը մօտ 40 զինուած մարդիկ տեսնելով՝ վախէն յետ կը դառնայ և թիւրքերուն կը հարցնէ, թէ այն ինչ մարդիկ են։ Թիւրքերը կը պատասխանեն, թէ շուտով կոտորած տեղի պիտի ունենայ հայոց թաղերի մէջ և խորհուրդ կուտան շուտով երթալ ու տներն ապաստանիլ կամ ազատելու միջոցներ խորհիլ։ Ժողովուրդը այս լուրէն սարսափահար, լեղիները ջուր դարձած, արիւնին ահէն սառած՝ կը թողուն տունները — թիւրքերու տուներուն կից լինելու պատճառով — ու կ՚ապաստանին բողոքականաց վարժարանը։ Պրսկսի լացը, սուգը, կական... Դեսպանների միջոցով եղելութեան մասին իմաց կուտան կուսակալին. ասիկա ալ՝ հանգստացնելով վրդովուած մարքերը, կ՚ըսէ. „Ելէք և ձեր բաներուն գացէք. ոչինչ չի լինիր, ես երաշխաւոր եմ“։ Սակայն ժողովուրդը, ոչ մի տեղ գործի չէր գացած. շուկան ամբողջ օրը գոց էր։

Այս տարի գարնան մի գաղտնի տարաձայնութիւն ելաւ քիւրդերու մէջ, թէ կառավարութիւնը հայերուն ջարդելու նոր հրամաններ արձակած է։ Շուտով սա խնդիրն էլ փակեց կառավարութիւնը, որովհետև գործերնին չէր գար, որ իրենց պատրաստած գաղտնի ծրագիրները ժամանակէն առաջ յայտնի լինին և իբր ցոյց՝ այս լուրը տարածող թիւրքը բռնեց և յետ ուղարկեց իր հայրենիքը։ Սակայն չպատժուեց ան, որ այս ամէն շփոթութիւններուն բուն պատճառը եղած էր—տխրահռչակ և վատահամբաւ Մահմատը, որ 96-ի կոտորածին ատեն ջարդերու պարագլուխն էր, որ 6-7 հայ մարդ իրարու ետևէ կարգ-կարգ կանգնեցրեց՝ հրացանին ուժը փորձելու համար, որ մտաւ Սէրէմճեանի տունը, տղամարդերը սպաննեց, կիները առևանգեց ևն, ևն։

Այժմ կառավարութիւնը իր մօտ կանչելով գաղտնի խորհուրդներ կուտայ հետևեալ քիւրդ պէյերուն՝ մարզիկցի Շէրիֆ պէյ, մըլանցի Մէհէմէտ պէյ, մակուրցի Իբրահիմ պէյ, ըամսըկցի Սատիմ պէյ, շանըցի Քամիլ պէյ, հայտարանցի Մէհէմէտ պէյ, շիտանցի Էմիր պէյ, շէրէֆանցի Հասան պէյ ևն։ Տեսնենք, ինչ փոթորիկ կը պատրաստուի մեր գլխուն։

Կառավարութիւնը նոր օրէնք է հանած, որով տուրքերը մի-մի մարդ պիտի հաւաքէ և երեք անգամէն պիտի վճարուին։ Ընայած ատոր այժմ 80-90 զօրքերով հաւաքելու կուգան տուրքերը. կը ծեծեն, կը նեղեն, ունեցած-չունեցածներին կը ծախեն, տուրքի հաշուին կ՚առնուն ու կերթան։ Գիւղացիներու բողոքները լսող չկայ։

ՆԱՄԱԿ ԱԽԼԱԹԷՆ

20/3 յուլիս, 1903

Ո՞վ կրնայ թիւրքի կեղծուպատիր քաղաքականութեան դարձուածները ճշդիւ իմանալ։ Հովի նման՝ մերթ այս, մերթ այն կողմէն կը փչէ և երկրի տարբեր մասերու մէջ տարբեր քաղաքականութեան կը հետևի։ Հոն, ուր գիտէ թէ այս ինչ պարագաներու տակ աղմուկ բարձրանալը վնասակար է, իր խստութիւնները քիչ մը կը մեղմէ, սպասելով, որ մի այլ առթիւ փոխարէնը ընու։

Բուլանըխէն հաստատ աղբիւրէ կը հաղորդեն, թէ քիւրդ թոռունները կը ձերբակալուին, հրացանները ձեռքերնէն կը խլուին։ Իբր թէ բարեկարգութիւն կ՚ընէ օսմանցին։ Վա՜յ հաւատացողին։ Նոյն տեղէն կ՚իմանանք նաև, թէ սպանութեանց թիւը աճած է, քրդութիւնը ծայրայեղօրէն գրգռուած է հայութեան դէմ և օր օրին կը սպաննէ հանդիպող հայը։ Պատճառը որոշ է։ Այս գարնան կոտորածի մը հրահանգ տրուած էր քրդերուն. երկրաշարժը պատճառ եղաւ այդ հրահանգի գործադրումը յետաձգելու։ Այժմ, երբ երկրաշարժի դառնութիւնները մոռցուեցան, քրդերը կ՚ուզեն վերսկսել իրենց գործը. սակայն կառավարութիւնը նպաստաւոր չի տեսնէր պարագաները, որովհետև երկրաշարժի աղէտը քննելու համար օտար հիւպատոսներ կը գտնուին այն կողմերը։ Քիւրդը չի հասկնար այդ քաղաքականութիւնը, հետևաբար իրեն տրուած հրահանգի գործադրման կը հետամտի. իսկ թիւրքը, անկարող ըլլալով իր ներքին քաղաքականութիւնը անգէտ քիւրդին հասկցնել, սկսած է զայն նեղել և վերջիններն իրենցմասին մտածելով՝ պահ մը մոռցան հայերը։

Բնորոշ փաստ մը պատահած է նորերս։

Ամսոյս 15-ին խումբ մը ֆէդայի կը տեսնուի հայ գիւղերէն մէյն մէջ։ Տեսնողները կ՚ըլլան երկու քիւրդ։ Մին կը փութայ կառավարութեան լուր տալ, իսկ միւսը հայ գիւղը կերթայ և միջոցներ ցոյց կուտայ, որ իր ընկերուջ անխոհեմ քայլին առջևը առնէ։ Մինչև զօրքը կուգայ, ֆէդայիները կը յաջողին տեղերնին փոխել, առանց տեսնուելու։ Քրդերէն մին բացարձակապէս կուրանայ ֆէդայի տեսնելը և կ՚օգնէ հայերուն խնդիրը առանց աղմուկի գոցեն. այդպէս ալ կը յաջողին։ Նոյն օրը երեկոյեան, մատնիչ քրդու հայրը և գիւղացիները հայոց գիւղը կուգան, կը կանչեն մատնիչը և հայերու առջև հրապարակաւ կը հանդիմանեն ըսելով. „ֆէդային ոչ ոքի վնաս չհասցներ, քրդու մը վատ խօսք մը չ՚ըսեր, ալ ի՞նչէ է քեզ այդ վատ արարքին մղող շարժառիթը“։ Յետոյ ցաւակցութիւն կը յայտնեն գիւղապետին պատահարի մասին և կը խոստանան, որ երկրորդ անգամ իրենց գիւղացիներու կողմէն այդպիսի վատ վարմունք տեղի չպիտի ունենայ։

Նոյն ամսի 17-ին ուրիշ հայ գիւղի մը մէջ ֆէդայիները կը նկատուին երկու քիւրդէ, որոնք հրացան կը պարպեն ֆէդայիներու վրայ։ Ֆէդայիները առանց ուշադրութիւն դարձնելու կը փութան դէպի լեռը՝ դիրքեր

բռնելու։ Քիչ ետք շրջակայ քիւրդ գիւղերէն մօտ 100 զինեալ քիւրդեր օգնութեան կը հասնին, կարծելով թէ իրենցմէ ոմանք կռիւ բռնուած են Թշնամիի մը հետ։ Բայց երբ հայ գիւղը կը հասնին և կ'իմանան թէ ֆէդայիներ տեսնուած են, լաւ մը կը յանդիմանեն երկու քիւրդերը, որ այդ աղմուկը հանած էին։ Ցեղապետ աղան կը կանչէ այդ 100 զինեալներն ու կ'ըսէ. „Հեմ ուզեր, որ ֆէդայիի վրայ յարձակիք. անոնք մեռնող և մեռցնող մարդիկ են։ Բաց աստի՝ մեզի ոևէ վնաս չէն հասցներ։ Լաւ չէ անոնց հետ թշնամանալ"։ Տարաբախտաբար այս բացատրութիւն անցողական երևոյթ է։ Եւ որպէս զի սխալ չհասկնաք, թէ քրդութիւնը բարեկրթուած և հայը սիրել սկսած է, պէտք է ըսել՝ թէ քիւրդը կը շարունակէ իր ալան-թալանը, աւար-աւերը հայու նկատմամբ և միայն հայ ֆէդայիէն կը վախնայ ու չ'ուզեր զուր տեղը թշնամանալ անոր հետ։

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԽԱԲՐԻԿՆԵՐ

ՔՍԱՆԵՐՈՒՔԵՐՈՐԴ ՆԱՄԱԿ

Պետերբուրգ, սեպտեմբերի 4

Ցուզման օրեր են։

Օր չէ անցնում, որ կովկասեան քաղաքներից, ուր մինչև այժմ լսւում էին խորին հպատակութեան ներբողներ և կամ համակերպութեան անվրդով քարոզներ, չհնչէին ժողովրդական բողոքի ձայներ՝ ուղղած „բարեխնամ կառավարութեան"։

Պատճառը այն նոր դաւն է, որ միապետութիւնը լարեց...

Եւ այս անգամ հայկական տկարաթև եկեղեցու դէմ։ „Լոյս տեսաւ բարձրագոյն հրաման՝ հայ-լուսաւորչական եկեղեցու կալուածքները գրաւելու մասին" — ահա այն հակիրճ հեռագիրը, որ ինչպէս ռումբ պայթեց կովկասեան հայութեան գլխին, ներկայ տարւայ յուլիսի սկզբներին, երբ միամիտ ժողովուրդը, համառուսական շարժումների հանդէպ, իրան համարում էր, գէթ առժամանակ, „մոռացած", ազատ՝ նոր փորձանքներից։

Հետաքրքրական են նախապատրաստական մանրամասները։ Ամբողջ եօթն ամիս իշխան Գալիցին, կովկասեան ցաւագարը, Պետերբուրգ հաստատուած՝ մտքեր էր պատրաստում իր հին ծրագիրը յաղթանակով պսակելու համար։ Պօբեդոնոսցեվ, ի հարկէ, նրան քաջալերեց։ Զայնակցեցին մի քանի վարագուրուած „ուժեր" ևս։ Եւ սրտապնդուած այդ աջակցութիւններից, նա ներկայացաւ մինիստրական կոմիտէին։ Սակայն այդտեղ — անսպասելի բան — փոքրիկ դիմադրութեան հանդիպեց. „Անյարմար է և վտանգաւոր, ասում էին չափաւորները, այս խառն ժամանակներում՝ յարուցանել մի նոր խնդիր և այն էլ այնքան փափուկ, ինչպէս է եկեղեցու կալուածքների հարցը"։ Մինիստրների մեծամասնութիւնը միացաւ այդ կարծիքին։ Բայց ծրագրի գլխաւոր հեղինակը էյուսահատուեց։ Նա թողեց մինիստրական կոմիտէն և սկսեց այլ ճանապարհներ բռնել, պալատի „ազդեցիկներին" համոզել... Պատմում են, որ մինիստրական ժողովը՝ ձայների մեծամասնութեամբ վճռեց մերժել կառավարչապետի ծրագիրը, բայց Նորին Մեծութիւնը չկամենալով վշտացնել իշխան Գալիցինին, որի մի այլ խնդիրը քիչ առաջ մերժել էր, ընդունեց փոքրամասնութեան կարծիքը և բարձրագոյն հաստատեց բացարձակ գողութեան առաջարկը...

Ուշագրաւ է մինիստրական կոմիտէի արձանագրութիւնը այս մասին, որ խնդրի մի փոքրիկ պատմութիւնն է ներկայացնում.

„1897 թուին հայ-եկեղեցական ծխական դպրոցները ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեանը յանձնելու միջոցին՝ նոյն մինիստրութեան յանձնուեցին և դպրոցական կալուածքները։ Բայց հայ հոգևորականութիւնը յայտնեց այնուհետև մի շարք դատաստանական պահանջներ, ապացուցանելով — ոչ առանց աջողութեան — որ յիշեալ կալուածքները պատկանում են, իբրև սեփականութիւն, ոչ թէ դպրոցներին, այլ եկեղեցիներին ու վանքերին։

„Այդ հանգամանքը, այլ և հայ հոգևորականութեան քաղաքական օրինազանց գործունէութիւնը ի նկատի առնելով, Կովկասի կառավարչապետ իշխան Գալիցին 1898 թուին խնդիր յարուցեց՝ հայ եկեղեցու բոլոր կալուածքները և դրամագլուխները յարքունիս գրաւելու մասին։ Իշխան Գալիցինի այդ առաջարկը դիմադրութեան հանդիպեց ֆինանսների և երկրագործութեան մինիստրների կողմից։ Երկու մինիստրները ապացուցանում էին, որ այդպիսի զօրեղ, բռնի միջոց, ինչպիսին է կալուածքների յարքունիս գրաւումը, հայ ազգաբնակութեան մէջ խոր դժգոհութիւն կարող է առաջացնել։ Ֆինանսների մինիստրը ցանկալի էր համարում, որ եկեղեցական կալուածքների վարչութիւնը յանձնուի առանձին մասնաժողովի, վակուֆների։ Վակուֆների մասնաժողովը, ուր մահմէտական հոգևորականութիւնը ունի ներկայացուցիչներ, կառավարում է Ղրիմի մահմէտականների հասարակական սեփականութիւնը։ Մասնաժողովը պիտի կազմէր՝ ներքին գործոց մինիստրութեան, տեղական կովկասեան վարչութեան և հայ հոգևորականութեան ներկայացուցիչներից, իսկ երկրագործութեան մինիստրը առաջարկեց գործադրել հայոց եկեղեցական կալուածքների վերաբերմամբ վարչական նոյն եղանակը, որով կառավարւում են Բեսարաբիայի մէջ արտասահմանեան վանքերի կալուածքները, այսինքն որպէս զի ընդհանուր հսկողութիւնը գումարների և կալուածքների վրայ յանձնուէր ներքին գործոց մինիստրութեանը։

„Իշխան Գալիցին և ներքին գործոց մինիստր Սիպիագին կարելի համարեցին ընդունել երկրագործութեան մինիստր Երմոլովի առաջարկը։ Այդ առաջարկի համեմատ կազմուած օրինագիծը բարձրագոյն հրամանով ենթարկուեց առանձին յանձնաժողովի քննութեան ստատս-սեկրետար Գրիշի նախագահութեամբ։

„Յանձնաժողովը գտաւ, որ առաջարկուած միջոցը, որը ծանր հարուած է տալիս բովանդակ հայ եկեղեցուն, կ'ազդէ ամբողջ հայ ազգաբնակութեան յարաբերութեան վրայ դէպի Ռուսաստանը՝ թէ պետութեան մէջ և թէ արտասահմանում։ Յիշեալ քայլը, յանձնաժողովի կարծիքով, ի նկատի ունի գլխաւորապէս կարձել հայ բարձր հոգևորականութեան և ինտէլիգէնցիայի օրինազանց գործունէութիւնը, բայց այդ նպատակով — այդպէս էր կարծում յանձնաժողովը —

կարելի է գործադրել ուրիշ միջոցներ, կարելի է ի միջի այլոց սահմանափակել հայ եկեղեցու ինքնավարութիւնը և հաստատել իրական վերահսկողութիւն՝ եկեղեցական արդիւնքների ու ծախքերի վրայ։

„Այդ պատճառաբանութիւնների համաձայն՝ յանձնաժողովը վերոգրեալ ձեռնարկութեան իրականացումը վաղաժամ համարեց։ Նոյն եզրակացութեան հետ համաձայնեց և մինիստր Սիպիագին, իսկ իշխան Գալիցին մեաց իր նախկին կարծիքին։ Յատուկ յանձնաժողովի արձանագրութիւնը լսելով՝ թագաւոր կայսրը բարեհաճեց յանձնարարել ներքին գործոց մինիստրին, Կովկասի կառավարչապետի հետ բանակցելուց յետոյ, ներկայացնել դիտողութիւններ, թէ ինչ միջոցներ պէտք է ձեռնարկել բաց առնելով վերոյիշեալ միջոցը, հայ հոգևորականութեան օրինազանց գործունէութիւնը դադարեցնելու համար։

„Սակայն ներքին գործոց մինիստրը իշխան Գալիցինի հետ բանակցելուց յետոյ ամենահպատակօրէն զեկուցեց, թէ ներկայումս միակ դրական միջոցը վերոյիշեալ նպատակով կարող է լինել հայ եկեղեցու կալուածքների գրաւումը հոգևոր հաստատութիւնների իրաւասութիւնից։ Դրա հետ միասին Սիպիագին, ի դէպս հաւանութեան թագաւոր կայսեր, հայցում էր բարձրագոյն թոյլտուութիւն՝ մուծանել յիշեալ գործը մինիստրների կոմիտէտը։

„Թագաւոր կայսեր բարի հաճութիւնը տեղի ունեցաւ 26 յուլիսի 1901 թ.՝ մուծանել ներկայ առաջարկը մինիստրների կոմիտէտը։ Ներքին գործոց մինիստր ստատս-սեկրետար Պլեվէ իմիջի այլոց բացատրում է, թէ առաջարկուած ձեռնարկութիւնը բոլորովին հասունացած է և ըստ ամենայնի համապատասխան այն միջոցներին, որոնց ձեռներէց է եղել և դեռ լինելու է ներքին գործոց մինիստրութիւնը՝ հայ եկեղեցու չափազանց ինքնավարութիւնը սահմանափակելու համար։ Դրա հետ միասին ստատս-սեկրետար Պլեվէ մատնացոյց է անում, թէ հայ հոգևորականութեան ստացուածքների արքունի վերակացութեան յանձնելը (պահելով հոգևորականութեան սեփականութեան իրաւունքը) յարմարութիւն է տալիս կանոնաւոր հսկել եկեղեցական արդիւնքների վրայ և առհասարակ դնել հոգևորականութեան գործունէութիւնը օրինականութեան և կարգի տակ։

„Ընդհանրապէս ստատս-սեկրետար Պլեվէի կարծիքով, այդ առաջարկը բեղմնաւոր է ու օգտակար և հայ հոգևորականութեան համար, որը այժմ, իշխան Գալիցինի վկայութեամբ, անփորձ ու վնասակար ձևով է օգտւում իրեն պատկանող հողերից։

„Առաջարկութեան էութիւնը կայանում է հետևեալում։ Հայ եկեղեցուն և նրա հաստատութիւններին, այսինքն դպրոցներին պատկանեալ բոլոր ստացուածքները (թէ եւրոպական Ռուսաստանում և թէ Կովկասում) յանձնւում են երկրագործութեան մինիստրութեան կառավարութեանը, իսկ գումարները՝ ներքին գործոց մինիստրութեան։ Վերջինիս այլագաւան քրիստոնեաների դէպարտամենտում կենտրոնանում է գլխաւոր վերահսկողութիւնը այդ կալուածքների և դրամագլուխների արդեանց և ծախսուց, ինչպէս և դրանց լիակատար հաշուէտուութիւնը“։

Եւ նոյն այն օրերին, երբ „Կառավարչական Համբաւաբերը“ իր պաշտօնական էջերում անմահացրեց նոր կարգադրութիւնը, կովկասեան կառավարչապետը՝ հպարտ իր յաղթութեամբ, շտապեց բռնել հարաւի ճանապարհը, հասաւ Թիֆլիս, կարգադրեց „ամենախիստ միջոցների դիմել“ նոր օրէնքը գործադրելու համար, գաղտնի հրահանգներ տուեց, պատուիրեց Թիֆլիսի պաշտօնական օրգանի մէջ յօդուածներ զետեղել և ցոյց տալ հայոց հասարակութեանը, որ „գրաւելով կալուածքները՝ կառավարութիւնը ուզում է աւելի հարստացնել հայոց եկեղեցին“, և ապա խաղաղ ու անվրդով, քնած խղճով, մեկնեց ամարանոց՝ վայելելու հանգստութեան քաղցրիկ ժամերը...

—

Բարդ չէ „կալուածական պատմութիւնը“։

Հայոց եկեղեցին Կովկասի մէջ ունի մեծ կալուածքներ, հող, անտառներ, տներ, ինչպէս և դրամական հարստութիւն, կտակուած ժամանակի ընթացքում և վաւերացրուած օրէնքի կողմից։ Այդ հարստութիւնը, չնայած այն թալանին, որին ենթարկուեց դարեր շարունակ, դեռ շատ խոշոր է և հասնում է մօտ 100-120 միլիոնի։ Դա կրօնասէր հայի տուրքն է, մատուցուած եկեղեցուն, քրիստոնէական վարդապետութեամբ յափշտակուած աղգի յարգանքը, նրա աշխատանքի և քրտինքի պտուղը, նուիրաբերուած իր տաճարներին։

Էջմիածինը և Անդրկովկասը տիրապետելուց յետոյ, ռուսաց կառավարութիւնը 1836 թւի Պօլժենիայով ճանաչեց հայ լուսաւորչական եկեղեցու սեփականութեան իրաւունքը և նրա վարչական իրաւասութիւնը։

Օրէնքը ասում է.

Յօդ. 117. — Իւրաքանչիւր շարժական կամ անշարժ ստացուած՝ նախանշանակեալ ի պահպանութիւն որևիցէ լուսաւորչական հայոց մենաստանի կամ եկեղեցւոյ կամ նոցին վերաբերեալ աստուածահաճոյ շինուածոց՝ համարի ընդհանուր ստացուած ողջոյն լուսաւորչական եկեղեցւոյ հայոց։

Յօդ. 121.—Կառավարութիւն ստացուածոց լուսաւորչական եկեղեցւոյ հայոց կախի անընդմիջապէս զերիցփոխանաց կամ զեկեղեցպանաց յիւրաքանչիւր եկեղեցիս եղելոց։

Յօդ. 99. — Վանահարք պահպանեն յամբողջութեան զշարժական և զանշարժ կայս մենաստանին, և պատասխանատու լինին զկանոնաւոր կիրառութենէ եկամտից։

Այդ օրէնքի համաձայն էլ կառավարումէին կալուածքները մինչև մեր օրերը, երբ փչեցին քաղաքական նոր հովեր և հայոց եկեղեցին ընկաւ միապետութեան կասկածոտ հալածանքի տակ, որի վերջաբանն եղաւ յունիսի 12-ի բարձրագոյն կարգադրութիւնը։

Իբրև մեկնաբանութիւն այդ կարգադրութեան՝ հրատարակւել է հետևեալ պաշտօնական նենգամիտ հաղորդագրութիւնը.

„Հայ լուսաւորչական եկեղեցու կալուածքները նոյն եկեղեցու հոգևորականութեան ձեռքով կառավարելու վերաբերմամբ՝ կովկասեան գլխաւոր վարչութեան հաւաքած տեղեկութիւններից երևաց, որ այդ կառավարութիւնը չէ համապատասխանում ոչ պետական իշխանութեան նպատակներին և ոչ իրեն՝ եկեղեցու օգուտներին։ Դրա հետ միասին՝ 1897 թւի յունիսի 2-ի և 1898 թւի մարտի 26-ի Բարձրագոյն հրամաններից յետոյ՝ հայ լուսաւորչական եկեղեցական ուսումնարանները և նրանց պատկանած գոյքերը ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան յանձնելու մասին՝ հայ լուսաւորչական հոգևոր իշխանութեան կողմից ծագեց ընդդիմութիւն այդ կարգադրութեան իրագործման դէմ, որ արտայայտւեց մի քանի կալուածքներ իր ձեռքում պահելու մէջ,

որոնցով պէտք է ապահովէին ուսումնարանների գոյութիւնը։ Այդ տեսակ երևոյթները վերացնելու համար՝ անհրաժեշտ նկատուեց հայ լուսաւորչական եկեղեցու կալուածքների վարչութիւնը կենտրոնացնել կառավարչական հիմնարկութիւնների տեսչութեան տակ։ Այդ խնդրի մասին մինիսարների կոմիտէի կազմած պօլօժենիէն ներկայ տարուայ յունիսի 12-ին արժանացաւ Բարձրագոյն հաստատութեան։ Ներկայ օրէնքը, պահպանելով հայ լուսաւորչական եկեղեցու սեփականութեան իրաւունքը յիշեալ կալուածքների վրայ, չէ զրկում նրան՝ ստացուելիք եկամուտների այն մասից, որը, ուսումնարանի պահպանութեան ծախքերը դուրս գալուց յետոյ, կը մնայ ազատ։ Հայ լուսաւորչական եկեղեցու կարիքները լցուցանելուց յետոյ՝ ինկատի կայ եկամուտների հարիւրին 3 յետաձգումով հիմք դնել այդ եկեղեցու օժանդակ դրամագլխին։ Այդ տեսակ դրամագլխի կազմութիւնը կարող է ապահովել հայ եկեղեցու բարեկեցութեան կանոնաւոր զարգացումը, մինչդեռ այժմ այդ դաւանութեան բազմաթիւ հաստատութիւնների մէջ, որոնք ընդարձակ կալուածքներ ունեն, շատ կան և այնպիսի ծուխեր, որոնց միջոցները չափազանց սուղ են և գիւղական հոգևորականութիւնը սակաւ ապահովուած։ Յիշեալ դրամագլուխը սահմանելով՝ նպատակ կայ օգնութիւն ցոյց տալ կարիք ունեցողներին։ Սրա հետ միաժամանակ պատշաճաւոր միջոցներ են ձեռք առնուում եկեղեցական կալուածքները կառավարելու նոր կարգ հաստատելու համար"։

„Պաշտօնական հաղորդագրութեան" այդ մութ ակնարկները աւելի պարզւում են կիսապաշտօնական ներշնչուած յօդուածների մէջ, որոնք լոյս տեսան այստեղ Պետերբուրգ, „Պետերբուրգսկի Վեդոմոստի" և այլ լրագիրներում, ինչպէս նաև Թիֆլիս, „Կավկազ"-ի մէջ, որոնց ձգտումն է համոզել հայոց հասարակութիւնը, թէ կալուածքները գրաւելով՝ կառավարութիւնը նպատակ ունի. ա) Աւելի մեծացնել լուսաւորչական եկեղեցու եկամուտները և հետևաբար նպաստել նրա բարգաւաճման, բ) Ապահովել աղքատ հոգևորականներին, որոնց վիճակը այժմ շատ ողբալի է, և գ) Ազատել եկեղեցին և կալուածքները ապօրինի յափշտակութիւններից։

Ի հարկէ, ոչ ոք չէ հաւատում։ Սրանից կէս դար առաջ, երբ դեռ այնքա՜ն նկատելի չէր կառավարչական ծրագիրների ներքին միտքը, հայերի մէջ, ճշմարիտ է, գտնւում էին միամիտներ՝ հաւատացող „բարեխնամ կառավարութեան" „բարեմիտ" ցանկութիւններին, սակայն այդ երանելի ժամանակները վաղուց են անդառնալի կերպով պատմութեան գիրկը անցել։

Փաստերը պերճախօս են։ Ուղղափառ կառավարութիւնը, տարիներ է արդէն, ամենաանողորմ միջոցներով ականներ է փորում հայկական եկեղեցու հիմքերի տակ. յաճախ խնդիր յարուցեց երկու եկեղեցիների միացման մասին, պետական գումարներով և խաբուսիկ խոստումներով շատ հայերի ստիպեց կրօնափոխ լինել, յայտարարեց հայոց հոգևորականութիւնը իբրև „հայկական շարժման գլուխ ու միանգամայն վտանգաւոր"—և երբ այս նոր ու չարամիտ քայլն անելու փափուկ որոշման վրայ է, ճգնում է հաւատացնել, զաւեշտական լրջութեամբ, որ ինքը նպատակ ունի աւելի ուժեղացնել այն եկեղեցին, որ „թշնամի է ուղղափառութեան" և այն հոգևորականութիւնը, որ „աղբիւր է հակառուսական պայքարի"։

Հաւատացող, այո՛, չկայ։ Այլ ընդհակառակը, ամբողջ հայութիւնը թէ Կովկաս և թէ սահմաններից դուրս՝ միաբերան և միակամ նկատում է վերջին կարգադրութիւնը իբրև մի դաւադիր միջոց, որ նպատակ ունի դրամականտնտեսական ուժով՝ իր ձեռքն առնել, ստրկացնել հոգևորականութիւնը, ապա առաջանցնել և հարւածել եկեղեցու անկախ գոյութեան։ Եւ դեռ ուրիշ շա՜տ երկիւղներ, ստեղծուած զգայուն ժողովրդի մտածողութեան մէջ։

Հայ ժողովուրդը, որ այդ հարստութեան միակ աղբիւրն է, դէմ չէ եղել և չէ երբէք՝ հոգևոր վարչութեան վրայ հսկողութիւն նշանակելու մտքին։ Հայը՝ հոգևորականութեան գերի չէ եղած։ Բայց բարեխիղճ, անխարդախ հսկողութիւնը կարող է գալ միմիայն ժողովրդից, որ գերագոյն տէրն է նոյնիսկ եկեղեցու, և ոչ թէ միապետական կառավարութիւնից, որի ճանկերը երկաթեայ են, որկորը՝ անյատակ, թշնամութիւնը՝ անսահման և բիւր անգամ աւելի վտանգաւոր ժողովրդի համար, քան ոևէ եկեղեցի ու նրա սպասաւորութիւնը։

Եւ բռնած այդ վտանգի երկիւղով՝ ցնցուած նորագոյն անարդարութեան հանդէպ, ժողովուրդը բողոքի և ցասման ճիչ է արձակում։

Այո՛, „Հպատակութեան աշխարհի մէջ" տեղի են ունենում անսպասելի և խրախուսիչ իրողութիւններ։ Ընդհանուր արթնացում է։ Կովկասեան շատ քաղաքների հայկական շրջանները ժողովներ են կազմում, ուր միակամ որոշումներ են ընդունում հրաւիրելու հայոց կաթողիկոսին, որ եկեղեցու ներկայացուցիչն է, ընտրուած ժողովրդից, — բողոքել կառավարութեան դէմ, չյանձնել կալուածքները, և եթէ հարկ լինի, հրաժարական տալ։ Առաջնորդներին ու սինոդականներին դիմումներ են լինում նոյն ոգով։

Տատանողները սպառնալիքներ են ստանում։ Շատ գիւղերում ժողովներ են լինում, ուր գեղջուկները երդւում են մինչև վերջ դիմադրել։ Կատարւում են թշնամական ցոյցեր, որոնց մասին „Դրօշակ"-ի խմբագրութիւնը անշուշտ կըստանայ ի մօտոյ գրւած նկարագրութիւններ։

Հնչում են զայրացման ձայներ նոյնիսկ այն երկրից, որ վաղուց արդէն բողոքների գերեզմանոցն է։ Եւ իբրև այդ բողոքի արտայայտութիւն, Կ. Պոլսի հայոց պատրիարքը դիմել է Էջմիածնի կաթողիկոսին, դիպլոմատիական մեղմութեան բոլոր ձևերը կրող պաշտօնական հետևեալ գրութեամբ.

„Վեհափառ Ս. Հայրապետ.

„Պոլսոյ օտար եւ հայ թերթերու մէջ՝ Պետերբուրգէն արտատսման ուղղած հեռագիր մը տեսնուեցաւ, որ կը ծանուցանէ թէ յետ այսօրիկ Ռուսաստանի հայոց եկեղեցապատկան կալուածներն ու գոյքերը կայսերական հրամանագրով մը՝ պիտի անցնին պետական վարչութեան ձեռք այն պլիսաւոր պատճառաւ, որ իբր թէ հայ կղերին ձեռքը կառավարուած ինչքերն ու գոյքերը մատակարարելու եղանակը ոչ պետական տեսակէտով կրցած էր հաճելի ըլլալ ու ոչ ալ հայ եկեղեցիին շահերուն համապատասխանել։

„Այսպիսի տնօրէնութիւն մը, որու ստուգութեան չենք ուզեր հաւատ ընծայել, ծանրակշիռ հանգամանք մը ունի կրկին տեսակէտով.—Նախ՝ վտանգի միջամտութիւն մը կ'ենթադրէ Ազգին Հոգեւոր վարչութեան յատուկ գործերուն, եւ հայ եկեղեցւոյ պատկանեալ կալուածոց ու գոյից սեփականութեան ու մատակարարութեան իրաւունքն կ'առնու ի անոր ձեռքէն, ու երկրորդ՝ վտանգի առանց փաստի ծանր տարաստանութիւն մը կ'ուղղուի հայ եկեղեցւոյ պաշտօնէից դէմ, որոնց վրայ հսկելու եւ ի հարկին, երբ ո եւ է զեղծում գործուած լինի, կարեւորն ի գործ դնելու իրաւունքն կը պատկանի ամենայն հայոց ընդհանրական Հայրապետին, ու հետեւաբար բանաւոր չլինիր ենթադրել թէ քաղաքական իշխանութիւնը ուզած լինի այս իրաւունքներն ազգին ձեռքէն առնել եւ իւրացնել՝ տարտամ պատճառաբանութեամբ մը։

„Նկատելով ուրեմն որ այդ կարգի անօրէնութիւն մը կրնայ շատ վնասակար հետեւանքներ ունենալ հայ եկեղեցւոյ համար ու մանաւանդ մէջ մեծ գայթակղութիւն յառաջ բերել. նկատելով որ մեր եկեղեցին մի եւ անբաժանելի լինելով, ազգն համօրէն, որ ի ոիիւռս աշխարհի, մասնակից կը գտնուի անոր ընդհանուր շահերուն եւ իրաւանց, եւ համերաշխաբար զայս պահպանելու պարտաւոր եմք եւ մենք, կ'համարձակինք խնդիրը մատուցանել սրբազնասուրբ Հայրապետիդ խորին ուշադրութեան եւ ծրարելով ի սմին նոյն հեռագրին տպագիր օրինակը, կ'խնդրենք խոնարհաբար որ շնորհ ընէք երկրորդիւ մը իմացնել մեզ թէ որ աստիճան ստուգութիւն ունի հեռագրական այդ լուրն ու անդորրել զմեզ եւ համայն թիւրքաբնակ ժողովուրդն, որ մեծ անձկութեամբ եւ անհամբերութեամբ ակն ունի վեհի Տեառդ սրատպնդիչ տեղեկութեանց։

Մատուցեալ ի համբոյր Օծեալ Աջոյ Սրբոյ հօրդ հոգեւորի
Մնամ խորին ակնածանօք խոնարհ որդի՝

Մաղաքիա արքեպ. Օրմանեան
Պատրիարք Կ. Պոլսոյ

Կ. Պոլիս, 16 յուլիս, 1903,
N. 13976

Ժողովրդական պահանջների ազդեցութեան տակ՝ Էջմիածինը յայտնել է իր դժգոհութիւնը կառավարութեան կարգադրութեան դէմ։ Սինոդը որոշել է, հակառակ պրօկուրօր Կանչելիի բողոքին, չը յանձնել կալուածները։ Վեհափառ կաթողիկոսը այդ իմաստով կոնդակ է տուել սինոդին։ Բացի դրանից՝ հայ եկեղեցու ներկայացուցիչը, գտնելով մինիստրների որոշումը անհիմն՝ դիմեց Պետերբուրգ։ Ահա այն հեռագիրների պատճէնները, որոնք փոխանակուեցին վերջին շաբաթները Պետերբուրգի և Էջմիածնի միջև.

5 օգոստոս 1903, Պետերբուրգ

Էջմիածին

Ամենայն Հայոց Պատրիարք-կաթողիկոս Մկրտչին

„Տեղեկանալով, որ եկեղեցական կալուածքների վերաբերմամբ յունիսի 12-ի բարձրագոյն հրամանի գործադրութիւնը հանդիպում է յապաղումների, խնդրում եմ Ձերդ Սրբութեան՝ հոգալ անյապաղ կարգադրութիւն անել այս մասին։ Ամէն մի յետաձգում, իբրեւ անհնազանդութիւն թագաւորական կամքին, առաջ կը բերի ծանր հետեւանքներ“։

Ներքին Գործերի Մինիստր
ՊԼԻՎԷ

---

6 օգոստոս 1903, Էջմիածին

Պետերբուրգ

Ներքին Գործերի Պարոն Մինիստրին

„Ի նկատի առնելով, որ յունիսի 12-ի բարձրագոյն հաստատած մինիստրական կոմիտէի որոշումը տեղի է ունեցել առանց նախապէս իմ միջոցով տեղեկանալու—ինչպէս այդ անուում էր համանման դէպքերում իմ նախորդների ժամանակ — այն հանգամանքների մասին, որոնք կարող էին ուշադրութեան չառնել կառավարութեան կողմից, ես օգոստոսի 4-ին, № 958 տուած իմ կոնդակով, հրահանգեցի Սինոդին ժամանակաւորապէս յետաձգել բարձրագոյն հրամանի հրատարակումը եւ ինձ թողնել — իբրեւ եկեղեցու բարձրագոյն պետին—ամենահպատակօրէն դիմել խնդիրքով Նորին Մեծութեան Թագաւոր-կայսեր, առաջ բերելով այն նկատումներն ու հանգամանքները, որոնք կապուած են այս հարցի հետ, եւ ներկայացնել ինձ ամբողջ գործի պատճէնը։ Սինոդը, ստանալով իմ կոնդակը, կարգադրեց կազմել մի զեկուցում այս գործի մասին, բայց դատախազ Կանչելին թոյլ չտուեց այդ անել, որով կարծես, հակառակ օրէնքի, ուզում էր անձամբ նախավճռել Սինոդի որոշման ձեւը եւ բովանդակութիւնը։ Այդ մասին տեղնուտեղը կազմեց արձանագրութիւն, որը եւ ներկայացրած է ինձ բոլոր անդամների ստորագրութեամբ։

„Ի նկատի առնելով խնդրի շատ լուրջ նշանակութիւնը ամբողջ հայ եկեղեցու համար եւ վերին աստիճանի անցանկալի հետեւանքները, որ նա կարող է ունենալ — դա պարզ երեւում է իմիջի այլոց այն իրողութիւնից, որ Սէնտ-անդրեսյոլում յունիսի 29-ին եւ այսուհետ, Էջմիածնում, օգոստոսի 3-ին ժողովրդի բոլոր խաւերից կազմուած ահագին ամբոխ՝ անձնապէս, այլեւ շատ հազարներից գրաւոր խնդրագրերով՝ ամէն օր դիմում են ինձ խնդրելով Նորին Մեծութեան ոտաց արկանել ամբողջ ժողովրդի աղերսանքները այս մասին,—խոնարհաբար խնդրում եմ Ձերդ բարձր գերազանցութեան ժամանակաւորապէս յետաձգել կառավարութեան վերոյիշեալ կարգադրութեան գործադրութիւնը եւ կարելիութիւն տալ ինձ ամենահպատակօրէն զեկուցանել Նորին Մեծութեան իմ բացատրութիւնները եւ այն հանգամանքները, որոնք ինձ թուում են անհրաժեշտ՝ խնդրի կանոնաւոր լուծման համար։ Այդ տեսակ դիտում իմ կողմից Նորին Մեծութեան՝ ես համարում եմ մի քայլ, որ թելադրում է եկեղեցու պետի պարտականութեան զգացումը դէպի նրա գերագոյն հովանաւոր Թագաւոր-կայսրը եւ դէպի իր հօտը“։

ՄԿՐՏԻՉ Կաթողիկոս Ամենայն Հայոց

---

10 օգոստ. 1903, Էջմիածին

Պետերբուրգ

Նորին Կայսերական Մեծութեան
Թագաւոր Կայսրին

Ձերդ Մեծութիւն, Ամենաողորմած Թագաւոր

„Ներկայ տարւայ օգոստոսի 6-ին ես դիմեցի հեռագրով Նորին բարձր գերազանցութեան ներքին գործերի պ. մինիստր ստատս-սեկրետար Պլէվէին, խնդրելով յետաձգել ներկայ տարւայ յունիսի 12-ին բարձրագոյն հաստատած մինիստրական կոմիտէի որոշումը՝ հայ եկեղեցական կալուածքները եւ դրամագլուխները կառավարական հիմնարկութիւնների վարչութեան յանձնելու մասին եւ դրանով կարելիութիւն տալ ինձ Ձերդ Կայսերական Մեծութեան ոտաց արկանել ինձ յանձնուած հոգեւոր հօտի, ամբողջ հայ ժողովրդի, աղերսանքները եւ իմ ամենահպատակ բարեխօսութիւնը յիշեալ կարգադրութեան առիթով։ Ըստանալով պատասխան պ. մինիստրից՝ համարձակւում եմ անմիջական կերպով դիմել Ձերդ Մեծութեան ամենահպատակ խնդիրքով՝ ամենաողորմածաբար թոյլատրել ինձ անձամբ Ձերդ Մեծութեան ոտաց արկանել ամբողջ հայ հոգեւոր հօտի աղերսը եւ ներկայացնել իմ կարեւոր բացատրութիւններն ու նկատումները՝ մինիստրական կոմիտէի որոշումը կանգնեցնելու մասին, որոնց թելադրում է իմ պարտականութեան զգացումը Ձերդ՝ Մեծութեան եւ ինձ յանձնած հօտի առջեւ“։

Ձերդ Կայսերական Մեծութեան ամենահպատակ աղօթարար
Գերազոյն Պատրիարք-կաթողիկոս Ամենայն Հայոց

---

14 օգոստոսի 1903, Պետերբուրգ

Էջմիածին

Նորին Սրբութեան Ամենայն Հայոց Կաթողիկոսին

„Ձերդ Սրբութեան հեռագիրը, ներկայ ամսւայ 7-ից, ամենահպատակօրէն զեկուցանելուց յետոյ, Թագաւոր-կայսրը բարեհաճեց բարձրագոյն հրամայել՝ մերժել Ձեր խնդիրքը՝ մինիստրական կոմիտէի բարձրագոյն հաստատուած յունիսի 12-ի որոշման գործադրութիւնը յետաձգելու մասին։ Միաժամանակ Նորին Մեծութիւնը հաճեց ինձ յանձնել օգոստոսի 10-ի Ձեր հեռագիրը։ Սրա հետ միասին հաղորդում եմ աւելի մանրամասն ցուցմունքներ՝ շարունակելիք դիմադրութեան հնարաւոր հետեւանքների մա-

սին, ինչպէս նաև անձամբ Նորին Մեծութեան ներկայանալու Ձեր դիմումի նկատմամբ“։

Ներքին գործերի մինիստր
ՊԼԷՎԷ

Ահա և այդ „մանրամասն ցուցմունքներ“ պարունակող մինիստրական հաղորդագրութիւնը, որի մասին յիշում է Պլէվէի վերջին հեռագիրը.

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ

№ 4289

13 Օգոստոսի 1903 թ.
Պետերբուրգ

Նորին Սրբութեան
Ամենայն Հայոց Կաթողիկոսին
Էջմիածին

Ձերդ Սրբութիւն,
Ողորմած Հովւապետ.

Ի լրումն օգոստոսի 12-ի հեռագրի՝ պատիւ ունեմ հաղորդել, որ Թագաւոր Կայսրը, օգոստոսի 7-ին Ձեր հեռագրի ամենահպատակօրէն զեկուցանելուս առթիւ, բարեհաճեց հրաւիրել Ձեր ուշադրութիւնը Ձերդ Սրբութեան անկանոն ընթացքի վրայ՝ ներկայ տարւայ յունիսի 12-ի մինիստրական կոմիտէի վճիռը գործադրելու վերաբերմամբ։ Օգոստոսի 4-ի Ձեր կոնդակը մի առաջարկութիւն է Սինոդին՝ չեղեալ Բարձրագոյն կամքի անյապաղ իրագործումից, այսինքն՝ կատարել հաւատարիմ հպատակութեան ամենածանր պարտականութիւն։

Նորին Մեծութիւնը բարեհաճեց իր կայսերական ուշադրութիւնը դարձնել նաև այն բանի վրայ, որ ներկայ դէպքը վերջին ժամանակներս առաջին չեղումն չէ հայ եկեղեցու կերպոյն ներկայացուցիչների կողմից առաջացայ ամենահնադանդ ընթացքից, եւ այդ պատճառով հրամայեց ինձ՝ եթէ հայ հոգեւորականութիւնը շարունակի իր անհնազանդութիւնը պետական իշխանութեան նկատմամբ, ձեռնարկեմ այն հարցի քննութեան՝ թէ որքան է շարունակում ռուս միապետների հայ եկեղեցուն պարգեւած վարչական կազմը Ռուսաստանում՝ համապատասխանել պետական շահերին։

Պարտաւոր եմ հաստատում ինձ աւելցնել որան, որ Նորին Մեծութիւնը հաճեց ինձ յանձնել օգոստոսի 10-ի Ձեր հեռագիրը՝ գտնելով անժամանակ այս գործի առիթով Ձեր անձամբ ներկայանալը։

Եթէ սակայն յետագայում Ձերդ Սրբութիւնը անհրաժեշտ համարի դալ Պետերբուրգ Ձեր բռնած ընթացքի մասին բացատրութիւններ տալու, հապա դրա համար պէտք է խնդրել Կովկասեան քաղաքացիական մասի կառավարչապետի միջոցով։

Ցանկանալով ինձ Ձեր աղօթքներին, խոնարհաբար խնդրում եմ ընդունել իմ խորին յարգանաց եւ հաւատարմութեան հաւաստիքը, որով պատիւ ունեմ լինել

Ձերդ Սրբութեան խոնարհ ծառայ
Վ. ՊԼԷՎԷ

Հարժումը կանգ չէ առնում պաշտօնական անձանց ուղղած դիմումներով, այլ խտանում, աւելի գունաւորւում և հանդէս է գալիս իբրև հաւաքական կոչեր՝ ուղղած հայութեան, նրա զանազան մասերի կողմից։ Հանրային ցասման նշաններից մէկն է այդ։ Ահա թէ որպիսի զայրացկոտ խօսքերով է դիմում Կովկասի հայ ժողովրդին այդ կոչերից մէկը.

„Ձը հասաւ արդեօք անվեհեր բողոքի ժամը, երբ ամենատկար զոհն անդամ, իբրև գերագոյն արտայայտութիւն իր անկողոպտելի իրաւունքի՝ ցասումով ըմբոստանում է իր դահիճների դէմ։

„Հերիք է, որքան օրօրեցինք խոհեմութեան մեղեդիներով։ Խիզախ ու ազնիւ „անխոհեմութիւնը“ միշտ աւելի զեղեցիկ ու օգտակար է եղել։

„Բողոքը հայութեան բոլոր անկիւններում, ուր մնածող մի դլուխ կայ և ըմբոստացող մի հոգի։

„Թող իբրև բողոքի արտայայտութիւն՝ ամենայն հայոց Հայրապետը հրաժարական տայ և խզէ ամէն յարաբերութիւն հայ եկեղեցու և ռուս կառավարութեան միջև։

„Թող հայոց եկեղեցիները փակեն իրենց դռները իբրև սգի նշան։

„Թող ժողովուրդը կազմակերպած ցոյցերով ու հանրագրերով հասցնէ իր արդար բողոքի ձայնը կենտրոնական կառավարութեան։

„Թող, վերջապէս, երիտասարդութեան զգայուն տարրը, իբրև արտայայտիչ ժողովրդի ցասման, կազմակերպի անհաշտ կռիւ համար։ Կռիւ ամէն տեղ և բոլոր միջոցներով բռնապետութեան վայրագ ներկայացուցիչների դէմ, որոնք միամիտ պատուհաս են դարձել մեր դժբախտ երկրի համար։

„Ցոյց տանք ուխտադրուժ բռնապետութեան, որ նա չէ կարող տեղաբար ու անպատիժ կերպով խաղալ մի ազգի ճակատագրի հետ։

„Ցոյց տանք աշխարհին, որ երկչոտ, անդգայ ստրուկներ չենք, որ մենք եւս ընդունակ ենք դիմադրելու, երբ ոտնահարում են մեր անկապտելի իրաւունքները“։

Նոր խօսքեր են դրանք, ախորժալուր, բայց տարօրինակ այն վայրերում, ուր միահեծան կառավարութիւնը անցած օրերին այլ բան չէր լսում, բայց եթէ խոնարհութեան մեղեդիներ, անձնուէր հպատակութեան մաղթանքներ եկեղեցու կամարների տակ։

Խե՜ղճ հայ ժողովուրդ։

Դարեր շարունակ աղօթեցիր և աղերսանքն ու աղօթքը դարձրիր քո կուռքը, քո Աստուածը, քո միակ քաղաքական իմաստութիւնը։ Սարկօրէն գլուխ ծռեցիր կրակապաշտ Պարսկաստանի առաջ։ Արաբական բռնապետները ովսաննաներով մտան քո աւերուած հայրենիքը։ Սելջուկը ձեռքիդ, սրի տեղ՝ բուրվառ տեսաւ։ Շրջանքներիցդ փառաբանութիւն քաղեցին Իրանի տէրերն ու Կ. Պոլսի արիւնռուշտ հրամայողները։ Խաչ ու խաչվառով դիմաւորեցիր Հիւսիսի միապետութեան։ Աղերսագրերով և արտասուքով ներկայացար քաղաքական աշխարհին և խոհեմութիւնն ու լռութիւնը քո միակ քաղաքականութիւնը դարձրիր Սուգի օրերին, երբ հոսում էր հայ արիւնը և երբ ցեխի մէջ էին գցում քո անունն ու պատիւը։

— Ի՞նչ շահեցիր։

— Անարգանք և զրկանք...

Դարևոր աղերսանքի սև, անարգ օրեր։

Անցէ՛ք, գնացէ՛ք։

Ահա լսւում են բողոքի հրապուրիչ ձայներ. ծնկաչոք ժողովուրդը՝ ոտքի կանգնած, մէջքը շտկած՝ բռնութեան աչքերին է նայում։

Լաւագոյն օրերի լուսաստղն է այս...

ԹԵՐԹՕՆ

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԶԻՆՈՒՈՐԸ

(Թարգմանութիւն ԼԱՄՆԷ-էն)

Ո՞ւր կերթաս, երիտասարդ զինուոր։

Կռուելու կերթամ ես, Հայրենիքի սուրբ սեղանին համար։

Թող օրհնեալ ըլլան քու զէնքերդ, երիտասարդ զինուոր։

Ո՞ւր կերթաս, երիտասարդ զինուոր։

Կռուելու կերթամ, արդարութեան, ժողովուրդներու սուրբ դատին և մարդկային ազգի իրաւունքներուն համար։

Թող օրհնեալ ըլլան քու զէնքերդ, երիտասարդ զինուոր։

Ո՞ւր կերթաս, երիտասարդ զինուոր։

Կռուելու կերթամ՝ փրկագնելու համար հարստահարուած եղբայրներս, խորտակելու համար անոնց շղթաները և աշխարհի կապանքները։

Թո՛ղ օրհնեալ ըլլան քու զէնքերդ, երիտասարդ զինուոր։

Ո՞ւր կերթաս, երիտասարդ զինուոր։

Կռուելու կերթամ անիրաւներուն դէմ, անոնց ինչպէս, որոնք կը կործանուին և կ'ոտնակոխուին, կռուելու կերթամ տէրերուն դէմ՝ գերիներուն համար, բռնապետներուն դէմ՝ ազատութեան համար…

Թո՛ղ օրհնեալ ըլլան քու զէնքերդ, երիտասարդ զինուոր։

Ո՞ւր կերթաս, երիտասարդ զինուոր։

Կռուելու կերթամ, որպէս զի աշխարհքը մէկ քանիներու սրսը չ'ըլլայ այլևս, կերթամ բարձրացնելու համար խոնարհուած գլուխները և ամրապնդելու այն սրունքները, որոնք կը կքին…

Թո՛ղ օրհնեալ ըլլան քու զէնքերդ, երիտասարդ զինուոր։

Ո՞ւր կերթաս, երիտասարդ զինուոր։

Մարտնչելու կերթամ, որպէս զի հայրերը չ'անիծեն այն օրը, երբ իրենց ըսուի՝ թէ քեզի զաւակ մը ծնաւ, ոչ ալ մայրերը անիծեն այն օրը, երբ առաջին անգամ իրենց գրկին վրայ իրենց զաւկըները սեղմեն։

Թո՛ղ օրհնեալ ըլլան քու զէնքերդ, երիտասարդ զինուոր։

Ո՞ւր կերթաս, երիտասարդ զինուոր։

Կռուելու կերթամ, որպէս զի այլևս եղբայրը չտեսնի տեսնելով, որ իր քոյրը կը խամրի խոտի մը պէս, զոր հողը չ'ուզեր սնուցանել, որպէս զի քոյրը այլևս լալով չի նայի իր եղբօրը, որ կը մեկնի այլևս չի վերադառնալու համար։

Թո՛ղ օրհնեալ ըլլան քու զէնքերդ, երիտասարդ զինուոր։

Ո՞ւր կերթաս, երիտասարդ զինուոր։

Կռուելու կերթամ, որպէս զի ամէն մարդ իր աշխատութեան պտուղը խաղաղութեամբ ուտէ. կռուելու կերթամ չորցնելու համար արցունքները այն պզտիկներուն, որոնք հա՛ց կը խնդրեն և որոնց կը պատասխանէի. „այլևս հաց չի մնաց, եղած չեղածը առին մեզմէ“։

Թո՛ղ օրհնեալ ըլլան քու զէնքերդ, երիտասարդ զինուոր։

Ո՞ւր կերթաս, երիտասարդ զինուոր։

Կռուելու կերթամ աղքատին համար, որպէս զի յաւէտ չի կողոպտուի հասարակաց ժառանգութեան մէջ իր բաժինէն։

Թո՛ղ օրհնեալ ըլլան քու զէնքերդ, երիտասարդ զինուոր։

Ո՞ւր կերթաս, երիտասարդ զինուոր։

Կռուելու կերթամ աղքատ տնակէն անօթութիւնը վանելու համար, ընտանիքներու մէջ վերահաստատելու համար առատութիւնը, ապահովութիւնը և ուրախութիւնը։

Թո՛ղ օրհնեալ ըլլան քու զէնքերդ, երիտասարդ զինուոր։

Ո՞ւր կերթաս, երիտասարդ զինուոր։

Կռուելու կերթամ տալու համար անոնց, որոնք հալածիչներէն մութ զնդաններու խորը նետուեցան, ազատ օդը, որ կը պակսի իրենց կուրծքերնուն, և լոյսը, զոր իրենց աչուըները կը փնտռեն։

Թո՛ղ օրհնեալ ըլլան քու զէնքերդ, երիտասարդ զինուոր։

Ո՞ւր կերթաս, երիտասարդ զինուոր։

Կռուելու կերթամ կործանելու համար պատնէշները, որոնք ժողովուրդները մէկ մէկէ կը բաժնեն և զանոնք կ'արգիլեն իրար համբուրելու, որպէս մէկ հօր զաւկըներ միևնոյն սիրով՝ միատեղ ապրելու սահմանուած։

Թո՛ղ օրհնեալ ըլլան քու զէնքերդ, երիտասարդ զինուոր։

Ո՞ւր կերթաս, երիտասարդ զինուոր։

Կռուելու կերթամ ազատագրելու համար մարդուն բռնաւորութենէն մտածումը, խօսքը և խղճմտանքը։

Թո՛ղ օրհնեալ ըլլան քու զէնքերդ, երիտասարդ զինուոր։

Ո՞ւր կերթաս, երիտասարդ զինուոր։

Կռուելու կերթամ վերուստ իջած յաւիտենական օրէնքներուն համար, արդարութեան համար, որ իրաւունքները կը պաշտպանէ, գթածութեան համար, որ կը մեղմացնէ անխուսափելի չարիքները։

Թո՛ղ օրհնեալ ըլլան քու զէնքերդ, երիտասարդ զինուոր։

Ո՞ւր կերթաս, երիտասարդ զինուոր։

Կռուելու կերթամ, որպէս զի ամէն մարդ հոգու մէջ Աստուած մը ունենայ և Հայրենիք մը երկրի վրայ։

Թո՛ղ օրհնեալ ըլլան քու զէնքերդ, եօթն անգամ օրհնեալ ըլլան, երիտասարդ զինուոր։

Ն Ո Ւ Ի Ր Ա Տ Ո Ւ Ո Ւ Թ Ի Ւ Ն

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՈՆ *ստացած է՝*

1903 թ. — „Աւետիսի“ եօթ խմբերից 466. 50 ռուբլի, Մրգաստանի կօմիտէից 500 ռուբլի, Արշալոյս խմբ. 20, Նոր ընտիր խմբ. 10, Կարմիր աղբիւր խմբ. 15, Դերիկ խմբ. 10, Ակներ խմբ. 5, Փ. Նալբանդեանի խմբ. 9, Բարդուղիմոս խմբ. 12, Տարօնացի Ազնիւ խմբ. 10, Փաշալը խմբ. 10, „Ճաքոն“ կօմիտէից 384. 42, Մարնոք խմբ. 10, Կարմիր Վանք խմբ. 6, Րաֆֆի խմբ. 10, Ցիզան Պայծառ խմբ. 10 ռուբլի։ Ընդամէնը 1487 ռ. 92 կ.։

Ճ ա ք ո ն ենթակօմիտէն՝ հին հաշուից մնացած 0. 42 ռուբլի, Ա մ ա ր ա ն ո ց ի Զաւէն խմբ. 19. 90 ռուբլի, Անդրանիկ խմբ. 11. 50, Կարմիր աղբիւր խմբ. 18. 8, Արծիւ խմբ. 45, Ողական ամրոց խմբ. 19. 87, Աշոթ Երկաթ խմբ. 13. 86, Շամիլ խմբ. 8. 20, Ազատասէր խմբ. 17. 66, Հեռատես խմբ. 13, Մունջ խմբ. 10, Կայծակ խմբ. 13, Սօսի խմբ. 5. 60, Հովիւ խմբ. 13, Սուրհանդակ խմբ. 22, Երեկոյթներից 65. 33, Ներկայացումներից 168, Հանգանակութիւն Ուսուլի ձեռամբ 3 ռ.։ Ընդամէնը 467 ռ., 42 կ.։

ԳԱՀԻՐԷԻ *կօմիտէն՝*

1902 թւի օգոստոսէն մինչեւ 1903 թւի մայիս.

Ր ա ֆ ֆ ի խումբէն 1902 թւի հաշիւներէն մնացած դրամ 300 դահեկան ողջ, նոյն խումբէն 1902 թւի հաշիւներէն մնացած 61, նոյն խմբէն 1903 թւի յունվար, փետրուար, մարտ ամսաճվարներ 60, նոյն խմբի միջոցով 238 դահկ. հետեւեալ անձերէ հանգանակւած՝ Կարոյ 10, Ոսկերիչ 50, Առաքել Թելեան 10, Քէլեկեան 10, Երկաթ 5, Տ. Ս. Կրակ 10, Ա. Մ. 5, Օ. Մ. Ա. 15, Թ. Փիշէնքճեան 20, Ստեփան Գարակեօզեան 5, վեցհարւածեանի մը վիճակահանութենէ 98։ Կ ո ր ի ւ ն խումբի 1902-1903 թւի ամսավճարներ մինչեւ 1903 մարտ 250, նոյն խմբի շահասիրական մէկ ձեռնարկէն 199, նոյն խմբին միջոցով 95 դահկ. հետեւեալ անձերէ՝ Գաքճեան, Տ. Ց., Դրաշար, Վ. Գրիգորեան, Մ. Թագւորեան, Տ. Կարապետեան, Ա. Գարագաշեան, Գրիգոր Պարոյր, Ծըմակ, Պարգեւ, Թումանեանց, Գարեգին Մատկեան 5-ական, Շէխ Ալի Խամլռալի, Հովամանեան, Վարպետ, Կ. Թամիլեան 10-ական, Մ ի հ ր դ ա տ խմբէն՝ 1903 թւի յունվ. մինչեւ մայիս անդամավճ. 200, նոյն խմբի միջոցով 195 դահկ. հետեւեալ անձերէ՝ Կոմիկ 20, Վահան 10, Ս. Ե. 20, Գ. Գալֆայեան 10, Մ. Մ. Մ. 20, Հուր 10, Ճլլիկ 10, Մ. Բ. 5, Բարի 50, Վարդան 40, Մ ի ն ի է է ն Արծիւ Արծրունիի միջոցով 16, Ա՞ 60, Սուր 40, Զար 20 դահկ.։ Գումար 1734 դահեկան։

ԱԼԵՔՍԱՆԴՐԻՈՅ *կօմիտէն՝*

Հայրենասէր 97. 20 դահեկան ողջ, Ափր. Տրիպօլսէն Շահէն 38. 20, նոյն տեղէն տիկին Հռիփ. 38. 20, Շմաւոն (5 ամսավճար) 25, Օհաննէս 5, Պէր-ի փեսայ 10, Պարոյր 20, Յունաստանի „Կիլիկիա“ խումբ 131, Տօղան 8, Խարնաշալ 5։ Գումար 378. 20 դահ.։

ՈՍԿԵՀԱՆՔԻ *կօմիտէն՝*

Արիւն խումբ 198 դահեկան, Քար 14, Հայ ոմն 78, Միրզօ Մուխօի 49. 20, Աղբիւր 49. 20, Քարտէս 33, Սարհատ խմբ. 111, Աւօ 321, Արիւնի Սուրմէն 165, Բօմբիւն 46, Բօմբիւն եւ ընկերք 102. 20, Սարհատ խմբ. 38. 20, Որոտումի հաշւէն 78, Որոտում

խմբ. 356, Բօմբին 41. 10, Կապար 16. 20, Սարհատ խմբ. 178, Սարհատ խմբ. 178, Բորենի 57. 30, Գիաւուր 17. 20, Խենթ 15. 30, Զաւէն 3. 20, Բաղդ, Արծիւ, Լուսին, Աղաւնի 99. 30, Բորենի 84, Գրքօ 31. 20, Խենթ 135. 30, Գնունի Խոռխոռունի 17. 20, Կապար 17, Փրհտ 232. 20, Խենթ 63, Յովազ 49. 20, Գ. 42, Հր. 21, Սուրինէն 21, Զաւէն 13. 20, Հ. Երկի 102. 10, Բորենի 66, Հեռագրից 71. 30, Հ.-ի միջոցով ընկերներէ 356, Կորուած զէնքերու փոխարէն 890: Միր Կարօի ձեռօք՝ Միր Կարօ 99, Միքօ 178, Սոպուհ 99, Սրապից 99, Պղտօ 66, Ե. Մ. 33, Ոմն-ի ձեռօք՝ Եղ. Գասպ. 132. 20, Հ.-ի միջոցով 253, Սիրեցեալ Վահազն 134, Մօրուք 14, Արծիւի 33. 10: Ութ հարւածեան մը (100) բամբուշտով 624, (2) դաշոյն 66, Բորենի Յուլիս 17. 20, Գնունի Խոռխոռունի 14, Աւօի 122. 20: Կայծակ խմբ. 50. 20, Արմաւիր 68. 10, Վիճակահանութիւն 59. 20, Հայ ոմն 99, Որոտում խմբ. 478. 20, Սարհատ խմբ. 114. 30, Սարհատ խմբ. 41. 20, Պողպատ 66. 20, Լեռնածորէն 165 դահեկան: Գումար 7590 դահեկան 30 փարա, մէճիտը 33 ղուրուշէն:

ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ Կեդր. Կոմիտէն՝

Գետափից վաննունու միջոցով.

Վաննունի 60 ղռան, X. 50, Հրացան 50, Զարտանաշէնացի 50, Չիչեան 10, Ասատուր 10, Կարօ 15, N. 20, Հիւր 26, Ղարիբ 10, Վէրք 5, Սալնոծորցի 50, Ղարաբաղցի 10, Նատատակ. յիշատ. 10, Ղարաբալու 10, Ողջակէզ 10, Աբդիւլ-Ռահիմ (պարսիկ) 10, Իւսուֆ (ասորի) 10, Ըս-էն 10, Զլուֆայ 5, Միրզայ-Մահամէտ եւ Միրզա-Մէյթի (պարսիկ) 10, Հայ 10, Հայ 10, Ոսկերիչ 5, Փիրաթամ 10, Ժամագործեան 10, Ազատութիւն 10, Համակրող (ռուս) 10, Ասլան 20, Առաքինութիւն 25, Բարեգործութիւն 15, Սիրաք 20, Գուգարցի 10, Գնդակ 10, Պօղոս Ստ. 5, Համակրող 5 ղռան: Գումար 616 ղռան:

Տիկ. Աննա մի ժամացոյց 115 ղռան, տիկ. Նազելի 50, տիկ. Սանդուխտ մի մատանի 16, տիկ. Մէլիխաթուն 10, տիկ. Վարդուհի 10, տիկ. Մէրջան 5, տիկ. Աննա 3, օր. Ծաղիկ 5, օր. Սօֆիա 10, օր. Էլիզա 10, օր. Գուգուլի 5, օր. Հայկանդուխտ 5, Գիւղական աղջիկ 5, Հայասէր 5, X. V. 10, ոմն 5, Գիժ 3, Յոյս 2, Խենթ. 2, տիկ. Եւա 10, տիկ. Մարիամ 3, Ոմն 2, Դաւթեան 4, Միութիւն 3, օր. Աննա 2, օր. Ծաղիկ 2, օր. Հայկուհի 3, օր. Հայուհի 2, Ոմն 2, Աղբիւր 6, Վասկանուշ 5, Գուրգէն 3, Զարուհի 3, օր. Մարգրիտ 2, Խաղաղութիւն 5, Ոմն 5, տիկ. Խաչխաթուն 5, Մ. Տէր-Մ. 2, Ոմն 5: Գումար 350 ղռան:

Շոռաւ եւ Սրքավայր գիւղերից (մարտ 27, 1903 թ. № 3 հանգանակութեան թերթով.

Ամբակում քահանայ Սրճաղանեանց 10 ղռան, Պետրոս 10, Բաքաջան 2, Երիցփոխեան 4, Եղեայ երկրագործ 2, Ղազար 4, Սարգիս 4, Մեսրոպ 4, Դաւլաթ 2, Մի ոմն Սեդրոս 10, Մկրտիչ 3, Արամ 4, Եսայի 3, Բաքա 3, Զոհրաբ 5, Տիգրան 4, Յարութիւն 10, Ալէք 10, Վահան 8, Թորոս 6, Սահակ 6, Խաչօ 8, Կապուտ 3, Կայէն 8, Մանուկ 6, Երէցփոխեան Խաչիկ 3, Մարտիրոս Յարութիւնեան 3, Եղիա Յովասափեան 4, Պօղոս 5, Վարդան 2, Աստուածատուր 3, Մեհրաբեան 6, Յովսէփ 4, Մնացական 3, Ղազար 4, Ստեփան Զաքարեան 4, Յովհաննէս Գէորգեան 3, Յովհաննէս Զաքարեան 4, համբարձում 2 ղռան: Քաշ Վարդանայ մատուռից՝ Խ. Յակոբ 8 ղռան, Բ. Աղախան 8, Ե. Աւօ 5, Շ. Յովսէփ 4, Ս. Աստուածատուր 2, Ա. Ստեփան 5, Յ. Թադէոսի 5, Առաքել 3, Ա. Ղազար 3, Միքայէլ 2, Ակօ 5 ղռան: Գումար 240 ղռան:

Սուլթան-համիդ խմբից (մարտ 27, 1903, № 6 հանգանակութեան թերթով) 170 ղռան:

Ընդհանուր գումար 1376 ղռան:

ԲԱՐՁՐԱՒԱՆԴԱԿԻ Պատ. Կեդր. Կոմիտէն՝

Սալնոյ Ձորի կեդր. կոմիտէի միջոցաւ.

Ապահունեաց ծաղկաւէտ շրջանի Սուրհանդակ գիւղի խմբէն (1902-ի հաշւէն) 160 դահեկան, Արթուն գ.-ի խմբ. 60, Խոռոռչք գ.-ի խ. 150, Քրա գ.-ի խ. 110, Քրագիւղցի Առիւծէն 80, Բլրտակ գ.-ի խ. 245, Մարք գ.-ի խ. 80 (1903 յունուարին), Խոռոռչք գ.-ի խ. 120, Վիրաւոր գ.-ի խ. 150, Բաղեր գ.-ի խ. 80, Արթուն գ.-ի խ. 60, Քրագիւղի խ. 100, Քարաղաշտ գ.-ի խ. 40, Բլրտակ գ.-ի խ. 110, Սուրհանդակ գ.-ի խ. 40, Մարք գ.-ի խ. 40, Գագաթ գ.-ի խ. 89, Փայլուն գ.-ի խ. 220, Բազարջակ գ.-ի խ. 60, Անջրդի գ.-ի խ. 20: Գումար 2014 դահ.:

Ծովահայեաց շրջանէն (1902-ին)՝ Իննակունք գիւղի խմբ. 100 դահեկան, Նորաշէն 280, Կանանչ գ.-ի խ. 20:0 1903 թ. յունուարին՝ Աւերակ գ.-ի խ. 185, Պալ գ.-ի խ. 40, Կանանչ գ.-ի խ. 240, Ձմակ գ.-ի խ. 80, Նորաշէն գ.-ի խ. 100, Քրշէղջ գ.-ի խ. 60, Ծաղիկ գ.-ի խ. 100, Ճերմակ գ.-ի խ. 60, Իննակունք գ.-ի խ. 310 դահեկ.: Գումար 1900 դահեկան:

Անիի շրջանէն Դժոխքի միջոցաւ 108 դահեկան Պուռակի շրջանէն՝ Ապառաժ գ.-ի խ. 100, Սողոմ գ.-ի խ. 70, Տարօն գ.-ի խ. 100, Յանատակ գ.-ի խ. 303, Ծովափ գ.-ի խ. (Սարհատի ձեռամբ) 100, Քար գ.-ի խ. 40, Խուղ գ.-ի խ. 40, Միջածոր գ.-ի խ. 40, Նուէր զանազաններէ 205, տուգանք 130, ծաղկաւէտ շրջանի Պայծառ գ.-ի խ. (1903 մայիսին) 80, Փայլուն գ.-ի խ. 60, Ուրուական շրջանի Հայաքնակ գ.-ի խ. 200 (1902 դեկտ.), 65 (1903 յունվ.), Պօղազքէսան գ.-ի խ. 85 դահ.:

Ընդհանուր գումար 5640 դահեկան:

ՆԱՒԱՀԱՆԳՍՏԻ Կեդր. Կոմիտէն՝

Գոգուռ խ. (1902 հաշւին) 40 ռուբլի, 30 յունիսից մինչեւ 16 յուլիս՝ Գագան Տարօնացի խ. 59, Առիւծ խմբ. 49. 90, Մուշեղ խ. 32, Մ. Կ. Բ. Ի. Ս.-ի միջոցաւ 51. 70, Դերըկայ խ. 3. 60, Արծիւ խ. բ. մաս 16. 80, Ծովասար 23. 20, Բօզ-Էօզուլ 8, Խաչալիր խ. 40, Ծիրինկատար խ. 47. 60, Սուրէնեան խ. 16, Հայկազեանց խ. 50, Վարազդատ 60, Տարօնացի 47. 50 ռուբլի:

Քրաշէնից՝ Գոգուռ խ. 62. 50 ռուբլի, Խամուր բերդ խ. 50, Ղարիբ խ. 40, Վիշապ խ. 50 ռուբլի, Արշաւիր խ. 27 ռ., Գոգուռ խ. 58, Խամուր բերդ 71, Ղարիբ 31, Վիշապ 42, Անտառ գիւղի Վազր խ. 10, Մի մասնաւոր խ. Արշակի ձեռքով 17. 40 ռուբլի:

Յուլիս 18-ից մինչեւ 30՝ Քաջքերունի խ. 27 ռուբլի, Բագրատունեաց խ. 27, Շանթ խ. 15. 45, Մարգանք 25, Արշաւիր 0. 60, Բիւրակ խ. 28 ռուբլի:

Նոր Քաղաքի Վարչ-ից (Տ.-ի ձեռամբ զէնքի համար) 300 ռուբլի, Ահաբեկիչ խմբից՝ Բազէ, Աղբիւր, Հաճի, Առիւծ, Փարամազ, Շանթ, Պիշի 1-ական ռուբլի:

Նոր-Կեանք	խմբ.	8. 50	ռուբլի	Դերծակ	խմբ.	21. 05	ռուբլի
Տապան	„	5	„	Արշաւիր	„	25. 60	„
Քաջքերունի	„	21	„	Ճորոխ	„	9	„
Շանթ	„	7. 10	„	Տարօնացի	„	9. 50	„
Ծովասար	„	15. 80	„	Արծիւ	„	8. 20	„
Նոր-Կեանք	„	15. 30	„	Դերիք	„	6	„

Մ. Շահնազարեան 5, Յ. Ղարիբեան 15, Տուգանք մօրուսից 200, Քրաշէնի Խամուր բերդ 54, Կարէ 12. 60, Քրաշէնի Գառնիկ խմբ. մի հրացանի համար 20, Տարայից 40, Սիմոնի անցեալ տարւան հանգանակութիւնից 5, Քրաշէնի Ղարիբ խ. 40, Արշաւիր խ.-ի 4 տղաներից 18, Մուշեղ 20, Բօզ-էօզուլ 9, Վահրամ 0. 50, Բագրատունի խ. 31. 70, Վարժապետ 7, Վահրամ 0. 50,Ա. Մուրատեան 1, Ս. Ղազարեան 1, Յ. Մխիթարեան 1, Ձորափորցի Մինասից 5, Ս. Յ-նեանից 100 ռուբլի տուգանք, Մ. Աղասարեանց 5, ռ., Ապաստանից՝ Կատարի Մանչից 10, Տ. Կատարից 2, Աբրահամ Գրաւորի 5, Յովհաննէս 10,Արծիւ խմբի Լուսիկից 5 ռուբլի:

ՄԱՀՒԱՆ ՊԱՏԻԺ

Պոլսոյ Կեդրոնական կոմիտէի վճռագրով՝ Պուրկասի 28 սնտուկ զէնքի գործին մէջ գլխաւոր յանցաւոր ճանչցուած և դատապարտուած Կարապետ Մարտիրոսեանը տեռորի ենթարկւեցաւ ռումանական Գալաֆաթ քաղաքին մէջ: Տեռորիստը ազատ է:

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

Է. ԱԿՆՈՒՆԻ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՎԷՐՔԵՐ

(ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐ)

Գիրքը բաղկացած է 368 երեսներից և պարունակում է „Կովկասեան խաբրիկների“ մեծ մասը, փոփոխած և լրացւած, նաև նոր գլուխներ:

Գինն է 3 ֆրանկ, Ռուսաստանում 1 ռ. 50 կոպէկ:

Խմբագրութեան դիմել հետեւեալ հասցէով՝

Rédaction du „Droschak“, Genève (Suisse)